



ՈՍԿԵՊԱՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

HISTORICAL MONUMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA
THE HISTORICAL
MONUMENTS OF
VOSKEPAR



ՀՏԴ 72.03
ԳՄԴ 85.11
Ո 465

Գիրքը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ոսկեպար գյուղի և գյուղամերձ տարածքների շուրջ 20 հնավայրերում պահպանված պատմական հուշարձանների համակողմանի ուսումնասիրությունը (պատմություն, ճարտարապետություն, վիմագրություն):
Հասցեագրվում է ինչպես հայրենի գյուղի պատմությանը նախանձախնդիր ոսկեպարցիներին, այնպես էլ ոլորտի մասնագետներին և ընթերցող լայն հասարակությանը:

The book presents the results of an overall research (history, architecture and lapidary inscriptions) into the historical monuments preserved in Voskepar Village (Tavush region, Republic of Armenia) and over 20 ancient sites in its vicinity.

Intended for the inhabitants of Voskepar who are very interested in the history of their native village as well as for specialists and the general reader.

Ո 465 Ոսկեպարի պատմական հուշարձանները / ՀճՈՒ: Եր.: ՀճՈՒ հիմնադրամ, 2013 - 42 էջ:

Աշխատասիրությամբ
Սամվել Կարապետյանի
Էմմա Աբրահամյանի
Աշոտ Հակոբյանի
Րաֆֆի Զորթոշյանի
Գայանե Մովսիսյանի
Հասմիկ Հովհաննիսյանի
Արմեն Գևորգյանի

Prepared by
Samvel Karapetian
Emma Abrahamian
Ashot Hakobian
Raffi Kortoshian
Gayane Movsissian
Hasmik Hovhannissian
Armen Gevorgian

ՀՏԴ 72.03
ԳՄԴ 85.11

Տեղադրություն. Ոսկեպար գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում՝ Իջևան մարզկենտրոնից ուղիղ գծով 22 կմ հյուսիս-արևմուտք (մայրուղով 32 կմ)՝ Ոսկեպար գետակի աջակողմյան հյուսիսահայաց ձորալանջին՝ ներկայիս հայ-ադրբեջանական սահմանին գրեթե կից՝ Իջևան-Նոյեմբերյան մայրուղու ձախ եզրին. «շինուած է լեռնային զառիվայրի վերայ և առաջովն ընթանում է փոքրիկ ջուր...»¹: Ծովի մակերևույթից բարձր է 740-920 մ:

Անունը. ինչպես գյուղանվան սկզբնավորման ժամանակը, այնպես էլ միջնադարյան վկայություններ նրա մասին հայտնի չեն:

¹ **Քաջիկեան,** Դանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1888, 3 ապրիլի, № 12, էջ 159:


Location. Voskepar Village is situated on the left edge of the highway of Ijevan-Noyemberian, almost adjacent to the present-day Armeno-Azerbaijani borderline, on the slope of a north-facing gorge stretching on the right bank of the stream Voskepar, 22 km north-west of Ijevan, the centre of Tavush Region, Republic of Armenia, in a straight line (32 km along the highway), at an altitude of 740 to 920 metres above sea level: “...built on a steep mountain slope with a rivulet flowing in front of it...”¹

Name. It remains obscure when the name of the village came into being; nor do there exist any medieval records bearing reference to it.

¹ **Քաջիկեան,** Դանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1888, 3 ապրիլի, № 12, էջ 159:



Ոսկեպար գյուղի տեսքը հյուսիսից
Voskepar Village from the north



Գավարզին բերդը և տեսարան Ոսկեպար գետի հովտից
 The castle of Gavarzin and a view of the valley of the river Voskepar



Ոսկեպար գյուղի տեսքը տիեզերքից
Voskepar Village as seen from space

Այսուհանդերձ, կասկածից վեր է, որ բնակավայրի՝ մեզ հասած անունը դարերի, գուցեև հազարամյակների վաղեմություն ունի, ընդ որում, խորհրդանշում է արգասաբերություն, առատություն: Ի դեպ, ոսկի արմատով Հայկական լեռնաշխարհում ունենք մի շարք այլ բնակավայրեր ևս, օրինակ՝ Ոսկեբակ (գյուղ Վան-Տոսպ գավառում), Ոսկեվազ և Ոսկեհատ (գյուղեր Արագածոտնի մարզում), Ոսկեվան (նույն՝ Տավուշի մարզում՝ Ոսկեպարից ոչ հեռու) և այլն:




Բնակչություն. գյուղամերձ հին գյուղատեղիների պահպանված հետքերը վկայում են, որ ներկայիս գյուղը ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով առնվազն երեք անգամ համեմատաբար փոքր տարածության վրա ենթարկվել է տեղափոխությունների:

Այսպես, օրինակ, վաղ միջնադարում գյուղը տարածված է եղել է դարով թվագրվող ցարդ կանգուն տաճարի շրջակայքում, իսկ միջնադարում՝ առնվազն ԺԲ-ԺԳ դարերից ի վեր, և մինչև ԺԹ դարի սկզբները հարատևել է ներկայիս գյուղի դեմ հանդիման՝ ձորակի հարավահայաց (ձախակողմյան) լանջին, ապա մասամբ կրկին փոխադրվել և մոտեցել է նշյալ տաճարին: Վերջին տեղափոխությունը ծայր է առել միայն 1860-ական թթ., որը, ինչպես

Despite this, however, it is beyond doubt that its present-day name, which symbolizes fertility and affluence, dates back to the depth of many centuries, and even perhaps, millennia. The Armenian Highland has a number of other places the names of which contain the root ‘voski,’ the Armenian equivalent of ‘gold’: Voskebak in Van-Tosp District; Voskevaz and Voskehat in today’s Aragatzotn Region; Voskevan in Tavush Region, not far from Voskepar, etc.

Population. The vestiges of the old village sites preserved in the vicinity of Voskepar show that the ancestors of its present-day inhabitants changed their place of living for at least three times under different circumstances, every time resettling comparatively close to their former place of residence.

In the Early Middle Ages, Voskepar lay in the neighbourhood of a 7th-century church, which is still preserved standing. In the Middle Ages, namely from the 12th to 13th until the early 19th centuries, it was located right opposite the present-day village, on the south-facing (left) slope of the gorge, after which part of its inhabitants again changed their place of living and came closer to the aforementioned church.



Զոդասի ջրամբարը և Գավարզին բերող Ոսկեպար գյուղից, տեսարաններ Կորաբերդից
The water reservoir of Joghaz and the castle of Gavarzin from Voskepar Village; partial views of Koraberd



Տեսարաններ Ոսկեպարի գյուղամիջյան գերեզմանոցից
Tombstones in the cemetery of Voskepar

ժամանակին է արձանագրվել, իբրև թե եղել է օդի վնասակարության պատճառով. «...գիտատեղուց, որ մի վերստ հեռու է սորանից: Փոխադրութեան պատճառն առաջինի օդի վատութիւնն է եղել...»²:

Ի դեպ, ամառային ամիսների համար գյուղի՝ նույնիսկ ներկայիս վայրն էլ արդեն ԺԹ դարի վերջին ևս նկատվում էր որպես ոչ այնքան բարենպաստ, և շեշտվում էին նրա «...ոչ այնքան գովելի օդն և կլիման»³:

ԺԹ-Ի դարերին վերաբերող վիճակագրական տվյալները բնիկ⁴ և գուտ հայաբնակ Ոսկեպարի բնակչության թվաքանակի մասին փաստում են, որ գյուղն իր մարդաշատությանը գավառի միջին բնակավայրերից էր: Առկա վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ year	տուն houses	արական males	իգական females	միասին total
1844 ⁵		104	76	180
1886 ⁶				229
1888 ⁷		151	105	256
1889 ⁸		159	109	268
1891 ⁹	35	172	121	293
1908 ¹⁰				606
1914 ¹¹				725

Ներկայումս գյուղն ունի 1050 բնակիչ:

Պատմական հուշարձաններ. Ոսկեպարը, հիրավի, չափազանց հարուստ է բազում դարերի ընթացքում արարված նյութական մշակույթի տարաբնույթ հուշարձաններով: Չանց առնելով հնագիտական հուշարձանները, որպիսիք համապատասխան հետազոտությունների դեպքում թերևս նույնպես կարող են հայտնաբերվել, և դրանց՝ հնագիտական պեղումներով ուղեկցվելիք ուսումնասիրությունների հրապարակումն ապագայի ակնկալիք է, ստորև ներկայացնում ենք այն բոլոր հուշարձանները, որոնք թվագրվում են՝ սկսած վաղ միջնադարից և հասնում մինչև Ի դարի սկզբները: Հնավայրից հնավայր դրանց քննությունը սկսում ենք գյուղամիջից:

Առաջինը գյուղի ծխական եկեղեցին է:

² Նույն տեղում:

³ **Քարխոտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 381:

⁴ Նույն տեղում:

⁵ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, ք. 73-74:

⁶ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, ք. 19:

⁷ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, ք. 134-135:

⁸ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, ք. 132:

⁹ **Քարխոտարեանց Մ.**, նույն տեղում:

¹⁰ Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, с. 176.

¹¹ Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 85.

Their last resettlement took place in the 1860s due to the insalubrity of the air, as written in the contemporary records: “...from the village site which is within a verst of this one. The reason for the resettlement was the former’s unhealthy air...”²

It should be noted that even the present-day situation of Voskepar was described as not very salubrious in summer-time particularly because of its “...air and climate, which are not so very favourable.”³

The available statistical records relating to the 19th to 20th centuries show that Voskepar, which was purely inhabited by native Armenians,⁴ ranked between the largest and smallest places of the district in terms of populousness:

At present the village has 1,050 inhabitants.

Historical Monuments. Voskepar is truly very rich in a wide variety of centuries-old monuments of material culture. Putting aside its archaeological heritage (it can surely be unclosed in the course of excavations and studies, the results of which are expected to be published in future works), we are presenting below all those monuments which are attributed to the period between the Early Middle Ages and the beginning of the 20th century.

Let us start our research from the parish church of Voskepar situated in the centre of the village.

² Ibid.

³ **Քարխոտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 381:

⁴ Ibid.

⁵ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, ք. 73-74:

⁶ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, ք. 19:

⁷ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, ք. 134-135:

⁸ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, ք. 132:

⁹ **Քարխոտարեանց Մ.**, ibid.

¹⁰ Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, с. 176.

¹¹ Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 85.

ԱՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Հայտնի է, որ 1860-ական թթ. բնակության համար գյուղացիների՝ նոր վայր փոխադրվելուց հետո կարիք է զգացվում նորահիմն գյուղում նոր եկեղեցի կառուցելու: Այս խնդիրն իր լուծումն է ստանում 1875 թ., սակայն օծումը տեղի է ունենում միայն 9 տարի անց՝ 1884 թ. հուլիսի 26-ին. «Գիւղիս եկեղեցին շինուած է 1875 թուին, բայց օծուեց ամսի 26-ին...»¹²:

1890-ական թթ. սկզբներին Նոր Ոսկեպարում հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ օծված փայտածածկ եկեղեցին¹³:

1929 թ. գյուղխորհրդի գրավումով եկեղեցին այլևս չի գործում¹⁴:

Ավելի ուշ եկեղեցու քայքայված շինությունը հիմնահատակ քանդում են:

ԳՅՈՒՂԱՄԻՋԻ ԳԵՐԵԶՍԱՆՈՑ

Այստեղ պահպանված մի քանի տասնյակ ուղղանկյունաձև, մեծ մասամբ արձանագիր, ինչպես նաև պատկերաքանդակ տապանաքարերը վերաբերում են ԺԹ-Ի դարերին, ավելի ստույգ՝ սկիզբ են առնում 1860-ական թթ.-ից և հասնում մինչև խորհրդային առաջին տասնամյակները:

Ստորև ներկայացնում ենք հնավայրից ընդօրինակված տապանագրերի հիմնական մասն ըստ ժամանակագրական հաջորդականության.

Այս է տապանն, 1868, / Եայգանի դոյստը/ըը Խանսիերվանի, / օ որ կարդա, յայս է:

Այս է տապանն Ալեքսանի որդի Օսեբ / Մավելեանցին, օ որ / կարդա, ասէ ա(ստուա)ծ (ողորմի), 1876:

Այս է տապանն Մոքել Գեղորեգեանցին, որդի Խիթարեանցին, օ որ որ կարդա, ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1879, Ղալթաղսազ:

Այս է տապանն Դավիդ որդի Օսեբին, / օ որ կարդա, ասէ, / ամ 1879:

Այս է տապանն Ալեքսան Բեկլարեանցի որդի Բեկլարին, օ որ կարդա, ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1880 ամի:

Այս է տապանն / Բեջան Ալավերդիովի կողակից / Քալին, օ որ կարդա, ասէ ա(ստուա)ծ, 1883:

Ի տապան Ալեքսանթրի որդիք Հակոբ կամ Չավայիր կամ Արրիեմին, օ որ կարդա, ասէ ա(ստուա)ծ ողորմի, / 1884:

SOURB ASTVATZATZIN (HOLY VIRGIN) CHURCH

When the villagers moved to a new place of living in the 1860s, they faced the necessity of building a new church there. They did so in 1875, but the sanctuary was consecrated only 9 years later, on 26 July 1884: “The church of this village was erected in 1875, but it was blessed on the 26th...”¹²

In the early 1890s, New Voskepar is mentioned as having a church named Sourb Astvatzatzin and covered with a wooden roof.¹³

It stopped functioning after the Village Council had taken possession of it in 1929.¹⁴

Later the dilapidated church building was totally levelled to the ground.

THE VILLAGE CEMETERY

This graveyard retains several tens of rectangular tombstones dating from the 19th to 20th centuries, the majority of which are inscribed, some of them being also enriched with reliefs. The oldest of them trace back to the 1860s reaching the first decades of the Soviet rule.

Below follow most of the epitaphs found in this cemetery in chronological order:

In this grave, 1868, reposes Yagan's daughter Khanpervan...

In this grave reposes Alexan's son Oseb Maveliants. May those who read this pray for his soul, 1876.

In this grave reposes Mokel Gevorgiants, Khitarants' son. May those who read this pray for his soul, 1879, Ghaltagsaz.

In this grave reposes Dad's son Oseb. May those who read this pray for his soul, 1879.

In this grave reposes Alexan Bekliariants' son Beklar. May those who read this pray for his soul, 1880.

In this grave reposes Bejan Alaverdiiov's spouse Kal. May those who read this pray for her soul, 1883.

In this grave repose Alexandre's sons Hakob or Javahir or Abraham. May those who read this pray for their souls, 1884.

To Aslan's daughter Maren. May those who read this pray for her soul, 1884.

In this grave reposes Papin's son Girigor



¹² Քաջիկեան, նույն տեղում:

¹³ Բարխուտարեանց Մ., նույն տեղում:

¹⁴ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), Երևան, 1994, էջ 183:

¹² Քաջիկեան, ibid.

¹³ Բարխուտարեանց Մ., ibid.

¹⁴ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), Երևան, 1994, էջ 183:

Տապանաքարեր գյուղամիջյան գերեզմանցում
Tombstones in the cemetery of Voskepar



Պատկերաքանդակներ գերեզմանոցի տապանաքարերին
Ornamental reliefs on the tombstones of the cemetery

Ասլանի դստր | Մարենին, ո որ կարդա, ասէ ա(ստուա)ծ, 1884:

Այս է տապանն Պասպի/նի որդի Գիրիգոր Գալթրելեանցի, ո որ կարդա, ասէ ա(ստուա)ծ, 1885:

Այս է տապանն | Բէջան Այալէ/րդիեանցին, ո որ | կարդա, ասէ | ա(ստուա)ծ, 1885:

Այս է տապան Աթաբէ/զե(ա)ն Արուքի(ւն)ի որդի | Եգանին, ով որ հանդիպի, ասէ ա(ստուա)ծ ողորմի, | 1887-ին մարտի 10:

Այս է տապանն Բէկլար Բէկլարեանցի կողակից Մարենի, ո որ կարդա, ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1890:

Այս է տապան Սիմոն/եա(ն)ց Սիմոնի որդի | Նրհապետնա, ասէք | ա(ստուա)ծ ողորմի, 1892 թվ.:

Այս է տապան Գաբրէլեանց Գրիգորի որդի Խաչատուրին, ով որ կարդա, | ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1894 ամի:

Այս է տապանն Օսէփ | Էվանէսովի որդի Դավիդն, ո որ կարդա, ասէ ա(ստուա)ծ | ողորմի, 1894:

Այս է տապանն | Դավի Էվանէսով | կողակից Սօփիան, | ա(ստուա)ծ ողորմի, 1897:

Այս է տապանն Դավիդ | Էվանէսովի որդի Խաչօին, | ո որ կարդա, ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1898:

Այս է տապան Օհան/էս Պասպիովի որդի Ալէքսանին, ո որ կարդա, | ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1900:

Աստ հանգչին ոսկերք | Նասիր Յարութի(ւ)նեան | Թամարեանաց, ա(ստուա)ծ | ողորմի, 1900:

Այս է տապան Ղազար/եանց Բէհպոտովի | տուտր որդի Նաշխանումին, ա(ստուա)ծ ողորմի, 1900 ամի:

Այս է տապան Մուրէ | Գէորգովի որդի Սիակին, ա(ստուա)ծ, 1900:

Ի տապան Գրիգօլ Բէգլարովին, ա(ստուա)ծ ողորմի, 1900:

Այս է տապանն Այալէր/դու որդի Ասլանին, ո որ | կարդա, ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1900:

Ի տապան Արութին աթին Թամարեանցի | որդի Մացակինին, | ա(ստուա)ծ ողորմի, 1902:

Այս է տապան Գիրա/զոս Ղալաչալեանի | որդի Մէսրօփին, ո որ կարդա, ասէ ա(ստուա)ծ ողորմի | 1902, 4:

Ի տապան Արութին կողակից Ջավայրին Աթաբէ/զեանցին, ո որ կարդա, ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1903:

Այս է տապան Սիմոն/եա(ն)ց Սիրգի որդի | Լէվանա, ասէք ա(ստուա)ծ | ողորմի, 1903 թ.:

Gabreliants. May those who read this pray for his soul, 1885.

In this grave reposes Bejan Alaverdiants. May those who read this pray for his soul, 1885.

In this grave reposes Atabegian Arutiun's son Yegan. May those who read this pray for his soul, 10 March 1887.

In this grave reposes Beklar Bekliariants' spouse Maren. May those who read this pray for her soul, 1890.

In this grave reposes Simoniants Simon's son Nahapet. May you pray for his soul, 1892.

In this grave reposes Gabreliants Grigor's son Khachatour. May those who read this pray for his soul, 1894.

In this grave reposes Osep Evanessov's son Dav. May those who read this pray for his soul, 1894.

In this grave reposes Dav Evanessov's spouse Sopi. May God have mercy upon her, 1897.

In this grave reposes Dav Evanessov's son Khacho. May those who read this pray for his soul, 1898.

In this grave reposes Ohanes Papiov's son Alexan. May those who read this pray for his soul, 1900.

In this grave repose the remains of Nasib Harutiunian Tamariants. May God have mercy upon him, 1900.

In this grave reposes Ghazariants Behpotov's daughter Nashkhanum. May God have mercy upon her, 1900.

In this grave reposes Muke Gevorgov's son Shak, God, 1900.

In this grave reposes Grigol Beglarov. May God have mercy upon him, 1900.

In this grave reposes Alaverdi's son Aslan. May those who read this pray for his soul, 1900.

This is the grave of Arutin ...Tamariants' son Matsakin. May God have mercy upon him, 1902.

In this grave reposes Giragos Ghalachalian's son Mesrop. May those who read this pray for his soul, 1902, 4.

In this grave reposes Arutin's spouse Javahir Atabegiants. May those who read this pray for her soul, 1903.

In this grave reposes Simoniants Mirza's son Levan. May God have mercy upon him, 1903.

In this grave reposes Atabek Sarukhanian's spouse Zarneshan. May God have mercy upon her, 1904.

Այս է տ(ա)յան Ապարէկ | Սարուխանեան | կողակից Չարնշանի/ն, աստված ողորմի, 1904:

Տապանս է հանգուցեալ | Ծովինարի իր կողակից Սերգիին, ազգէն | Մաղսուդեանց, ասէք | ա(ստուա)ծ ողորմի, 1904:

Ի տապան Ասլան | Ալավերդովի որդի | ..., ա(ստուա)ծ ողորմի, 1904:

Ի տապան Սէրգի | Բեզլարեանցին, | ա(ստուա)ծ ողորմի, 1905:

Այս է տապան Պապա | Պապիեանի որդի Գիորքին, օ որ կարդա, ասէ | ա(ստուա)ծ ողորմի, 1905:

Այս է տապան Գիրագոս | Ղալաջաբանցի, որդի Արտէմի/ն, օ որ կարդա, ասէ աստ(ուա)ծ ողորմի, | 1906:

Այս է տապան Սիմօն | Սիրգայեան Մախսուդեանց, վախճանվեց 1907-ին, 11 ամի:

Այս է տապանն Վանօ | Պապաօվի կողակից | Խանումի/ն, ա(ստուա)ծ ողորմի, 1908:

Այս է տապան | Մխիթար Գիորքեանցի որդի Բաբօին, | ա(ստուա)ծ ողորմի, 1908:

Ալավերդյան Թալի Օսեպի, 1897-|1909, յիշատակ իր | որդի Սահակից:

Ի տապան Ար/ուքին Թամարեանցին, ա(ստուա)ծ ողորմի: Թերևս 1900-ական թթ.:

Այս է տապան Դավիթ Տէր Արուդինեանցի կին Քալալին: Թերևս 1900-ական թթ.:

Հովսեփ | Հարությունի Հարությունյան | (1850-1910):

Այս է տապան Ալէքսանի | կողակից Վարքթեր Սարուխանեանցի, օվ օք յինուպ (հանտիպի*), | ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1911 թվին:

Աստ հանգչին ոսկերք | Գոլնազար Տէր Յարութինցի որդի Գիրակոսը, | օվ որ կարթա, ասէ ա(ստուա)ծ ողորմի, | 1914, մայիսի 16:

Բեզլարյան Թալալ | Հովսեփի, 1892-1915 թթ. հիշատակ իր դուստր | Արուսյակից:

Ի տապան Իռչան | Տէր Արութինովի որդի | Գրիշկին, օվ որ կարդա, | ասէ ա(ստուա)ծ ողորմի, 1917:

Այս է տապան Սէրօփ | Արութինեանի կին Հօրոմսիմին, աստուած | ողորմի, 1920:

Այս է տապան Ճամիր | Գրիգորեանցին | ասէ աստված ողորմի, | 1923:

Այս է տապան Առաքէլ Սարուխանեան(ա)ն(գ)ի: || Այս է տապան Առաքէլ Սարուխանեան(ա)ն(գ)ի || որդի Մանվելին, աստու(ա)ծ ողորմի, | 1925:

Բեզլարյան Գրիգոր | Բագրատի, | ծ. 1913-1927 թթ. | ... Խորենից:

Գևորգյան Գիվի | Գրիգորի, ծն. 1887 թ. | վխճ. 1928 թ., | հիշատակ իր փոքրը | որդի Բաղիշից:

This is the grave of Tzovinar, the spouse of Sergin from the Maghsudians' family. May God have mercy upon her, 1904.

In this grave reposes Aslan Alaverdov's son... May God have mercy upon him, 1904.

In this grave reposes Serg Beglarians. May God have mercy upon him, 1905.

In this grave reposes Papa Papian's son Giork. May those who read this pray for his soul, 1905.

In this grave reposes Artem's son Giragos Ghalajalbants. May those who read this pray for his soul, 1906.

In this grave reposes Simon Mirzayan Makhsudians, who died at the age of 11 in 1907.

In this grave reposes Vano Papaov's spouse Khanum. May God have mercy upon her, 1908.

In this grave reposes Mkhitar Giorkians' son Babo. May God have mercy upon him, 1908.

Tali Osep Alaverdian, 1897-1909: from her son Sahak.

This is the grave of Arutin Tamarians. May God have mercy upon him (probably, an epitaph of the 1900s).

In this grave reposes David Ter-Arudinians' wife Kalal (probably, an epitaph of the 1900s).

Hovsep Harutiun Harutiunian (1850-1910).

In this grave reposes Alexan's spouse Vartiter Sarukhanians. May those who see this pray for her soul, 1911.

In this grave repose the remains of Golnazar Ter-Harutiunians' son Girakos. May those who read this pray for his soul, 16 May 1914.

Talal Hovsep Beglarian, 1892-1915: from her daughter Arusyak.

This is the grave of Rushan Ter-Arutinov's son Grishk. May those who read this pray for his soul, 1917.

In this grave reposes Mesrop Arutiunian's wife Horomsim. May God have mercy upon her, 1920.

In this grave reposes Jamir Grigorians. May God have mercy upon him, 1923.

In this grave reposes Arakel Sarukhanians. In this grave reposes Arakel Sarukhanians' son Manvel. May God have mercy upon them, 1925.

Grigor Bagrat Beglarian, 1913-1927... from Khoren.

Givi Grigor Gevorgian: born in 1887, he died in 1928. From his younger son Baghish.



Պատկերաքանդակներ գերեզմանոցի տապանաքարերին
Ornamental reliefs on the tombstones of the cemetery

Բեգլարյան Հայկանուշ | Մերզնի, | ծ. 1893-1933 թթ., | որդի Խորենից:

Գևորգյան Սաթիկ | Միկիչի, ծ. 1920 թ. | մահ. 1935 թ., | հիշ. իր ամուսին | Լուսակից:

Գևորգյան | Մերզի Մուքելի, | ծ. 1864 թ., մահ. | 1936 թ. 6-ին, իր | որդիներից:

Գևորգյան Նաստ | Աթնի, ծ. 1875 թ. | մահ. 1945 թ. 6-ին, | իր որդիներից:

ՂԱԶԱՆՉՈՒ ԺԱՄ

Գտնվում է Ոսկեպար գյուղի հարավարևմտյան բարձրադիր եզրին՝ ծովի մակերևույթից 905 մ բարձրության վրա (N 41°03'34.74"; E 045°03'01.20"):

Եղել է արևելյան կողմում կիսաբոլորակ խորանով միանալով քաղաքածակ կառույց (արտաքին չափերն են՝ 7,42 x 4,97 մ), որից պահպանվել են միայն խորանին հարող հատվածի չնչին մնացորդները: Իրականացված է անմշակ քարով, կրաշաղախով: Ըստ կառուցողական առանձնահատկությունների՝ կարելի է թվագրել ԺԶ-ԺԷ դարերով:

Haykanush Sergi Beglarian, 1893-1933: from her son Khoren.

Satik Mikich Gevorgian: born in 1920, she died in 1935. From her husband Lusak.

Sergi Mukel Gevorgian: born in 1864, he died on the 6th... in 1936. From his sons.

Nato Atin Gevorgian: born in 1875, she died on the 6th... in 1945. From her sons.

CHURCH OF GHAZANCHI

The monument is situated at the elevated south-western extremity of Voskepar, at an altitude of 905 metres above sea level (N 41°03'34.74"; E 045°03'01.20").

The church of Ghazanchi used to represent a uni-nave vaulted structure with a semi-circular apse in the east (exterior dimensions: 7.42 x 4.97 metres). At present its surviving vestiges comprise only the meagre remnants of the part adjoining the apse. The construction peculiarities of the church, which was built of undressed stone and mortar, trace it back to the 16th to 17th centuries.

ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉ

Գտնվում է Ոսկեպար գյուղից շուրջ 300 մ հարավ-արևմուտք՝ լեռնաճյուղի հրվանդանաձև երկարած բարձրադիր հարթակի եզրին՝ ծովի մակերևույթից 1041 մ բարձրության վրա (N 41°03'24.78"; E 045°02'28.50"):

Մենավոր դիրքով թևավոր խաչի (81 սմ բարձր., 93 սմ լայն. և 24 սմ հաստ.) ստորին թևը չի պահպանվել: Թվագրվում է ԺԳ դարով: Հաշվի առնելով տեղադրության առանձնահատկությունը՝ այն կարող էր կանգնեցված լինել մաս որպես սահմանախաչ:

A WINGED CROSS


The monument is situated on the edge of the elevated part of a mountain branch which extends like a cape, about 300 metres south-west of Voskepar, at an altitude of 1,041 metres above sea level (N 41°03'24.78"; E 045°02'28.50").

This lonely cross, the lower wing of which is not preserved, has a height of 81, a width of 93 and a thickness of 24 cm. It dates back to the 13th century. Taking into account its peculiar position, we may presume that it was originally erected to mark a boundary.



0 1 2 3 4 5 m

Ղազանչու ժամ եկեղեցու մնացորդները Ոսկեպարի հարավարևմտյան եզրին և հատակագիծը
The remnants of the church of Ghazanchi at the south-western extremity of Voskepar and its plan



Թևավոր խաչ Ոսկեպար գյուղից 300 մ հարավ-արևմուտք
A winged cross 300 metres south-west of Voskepar

ՀԻՆ ՈՍԿԵՊԱՐ ԳՅՈՒՂԱՏԵՂԻ

Տարածված է եղել ներկայիս համանուն գյուղի դեմ հանդիման՝ կտրտված տեղանքով հարավահայաց լեռնալանջերին՝ ծովի մակերևույթից 890-930 մ բարձրության վրա (N 41°04'39.18"; E 045°02'27.12"):

Առնվազն զարգացած միջնադարից և մինչև 1860-ական թթ. հարատևած բնակավայրից երբեմնի բնակելի շինությունների հետքերը ներկայումս հազիվ են նշմարվում, իսկ ծխական եկեղեցին, որը դեռևս 1890-ական թթ. այցելուին ներկայացել է կիսավեր դրության մեջ («Ընդարձակ աւերակ, Նոր-ին հանդէպ, վտակի ձախ կողմում, որի մէջ կայ կիսաւեր մեծ եկեղեցի և հանգստարան, բաղանիս և փլատակների տակ ծածկուած շէնքեր»¹⁵), այժմ այն աստիճան է քայքայվել, որ տեղն իսկ մուսցոթյան է մատնվել:

Հին Ոսկեպարի գերեզմանոց. գտնվում է վերոնշյալ գյուղատեղիի բարձրադիր մասում՝ ծովի մակերևույթից 919 մ միջին բարձրության վրա (N 41°04'39.18"; E 045°02'27.12"):

Հնավայրում պահպանված մի քանի գեղաքանդակ խաչքարեր կամ դրանց բեկորները, մեծաթիվ անմշակ սալատապանները և մինչև

OLD VOSKEPAR VILLAGE SITE

Old Voskepar used to extend on some south-facing mountain slopes of rough terrain right opposite the present-day village of the same name, at an altitude of 890 to 930 metres above sea level (N 41°04'39.18"; E 045°02'27.12").

The traces of the houses of Old Voskepar, which existed from at least the High Middle Ages until the 1860s, can hardly be discerned today. In the 1890s its parish church was in a semi-ruined state: "A large village site on the left side of the tributary, opposite New [Voskepar]. It has a semi-destroyed church of large dimensions and a cemetery together with a bath-house and other buildings which are buried in ruins."¹⁵ At present even the site of this monument cannot be found.

The cemetery of Old Voskepar lies at its most elevated site, at an average altitude of 919 metres above sea level (N 41°04'39.18"; E 045°02'27.12").

It retains several ornate cross-stones and khachkar fragments as well as a large number of undressed blocks of stone and inscribed rectangu-



Հատված Հին Ոսկեպար գյուղատեղիի գերեզմանոցից, ԺԲ-ԺԹ դդ.
A partial view of the cemetery of the village site of Old Voskepar, 12th to 19th centuries

Տեսարաններ Հին Ոսկեպար գյուղատեղիի գերեզմանոցից, ԺԲ-ԺԳ դարերով թվագրվող գեղաքանդակ խաչքար և քլավոր խաչ գերեզմանոցում
Partial views of the cemetery of the village site of Old Voskepar; an ornate cross-stone (12th to 13th centuries) and a winged cross in the graveyard

¹⁵ Բարխուտարեանց Մ., նույն տեղում:

¹⁵ Բարխուտարեանց Մ., ibid.



Գերեզմանական հուշարձաններ (խաչքար, ուղղանկյունաձև և խոյաձև տապանաքարեր) Հին Ոսկեպար գյուղատեղիի գերեզմանոցում, ԺՁ-ԺԷ դդ.

Funerary monuments (a cross-stone with rectangular and ram-shaped tombstones) in the cemetery of the village site of Old Voskepar, 16th to 17th centuries



1803 և 1805 թթ. տապանաքարեր Հին Ոսկեպար գյուղատեղիի գերեզմանոցում
Tombstones dated 1803 and 1805 in the cemetery of the village site of Old Voskepar

1800-ական թթ. սկզբներին վերաբերող ուղղանկյունաձև արձանազիր տապանաքարերը հուշում են, որ տեղում թաղումներն անընդմեջ իրականացվել են առնվազն ԺԲ դարից մինչև ԺԹ դարը:

Այս է տապան Ավաքա/նց Եզանի որդի Ալահավ/երդուն, օվ որ կարդա, | մէ ողորմի ասէ, թվ(ին) ՌՄԾԲ (1803):

Այս է տապանն Ավաք/անց Աթալբեկի որդի | Սարուխանին, որ կարդա, | ասէ ա(ստուա)ծ ողորմի, թվ(ին) ՌՄԾԴ (1805):

Այս է շիրիմ Եկան քոխի կին | Հօռմսիմին, ա(ստուա)ծ ողորմի, | թվ(ին) 1813:

ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Գտնվում է գյուղի հյուսիսարևելյան եզրին՝ մայրուղուն կից՝ ծովի մակերևույթից 754 մ բարձրության վրա (N 41°04'24.36"; E 045°04'00.58"):

Ըստ ամենայնի, սա այն գերեզմանոցն է, որը սկզբնավորվել է առնվազն վաղ միջնադարում և պատկանել է դարում կառուցված ցարդ կանգուն հայտնի տաճարի շուրջ գոյություն ունեցած Ոսկեպար գյուղին, որը, ինչպես երևում է, հարասնել է մինչև ԺԳ-ԺԴ դդ.: Համենայն դեպս, այդ են վիաստում հնավայրում

lar gravestones reaching the early 1800s. This shows that burials were held there without any intervals from at least the 12th until the 19th centuries.

In this grave reposes Avagiants Yegan's son Alahaverdi. May those who read this pray for him, 1252 (1803).

In this grave reposes Avagiants Ataybek's son Sarukhan. May those who read this pray for him, 1254 (1805).

In this grave reposes Village Head Yekan's wife Horomsim. May the Lord have mercy upon her, 1813.

THE NORTH-EASTERN CEMETERY OF VOSKEPAR

This graveyard extends at the north-eastern extremity of the village, close to the highway of Ijevan-Noyemberian, at an altitude of 754 metres above sea level (N 41°04'24.36"; E 045°04'00.58").

Most presumably, it dates back to the Early Middle Ages and belonged to the village that existed around the aforementioned 7th century



Հասված Ոսկեպար գյուղի հյուսիսարևելյան գերեզմանոցից
A partial view of the north-eastern cemetery of Voskepar

պահպանված գերեզմանական հուշարձանների մնացորդները (մասնավորապես խաչքարերի պատվանդանները): Հնավայրում առկա վերջին թաղումները վերաբերում են 1830-1860-ական թթ.: Դրանք ժամանակաշրջանին բնորոշ ուղղանկյունաձև և գլխավորապես արձանագիր տապանաքարեր են, որոնցից մի քանիսի տապանագրերը ներկայացնում ենք ստորև.

Այս է տապան Ս/ա...խամումի դ[ուստր] / Ավետին... / ..., || թվ(ին) / Ռ-ՄՁ (1831):

Այս է տապան Սարուխան / Ալավերդու կին Նազարին, / ասէք ա(ստուա)ծ ողորմի, 1831:

Այս է տապան Մուրազիկ Կիրակոսի, / որ եմ որդի Օհանէսի, հանդիպօղ / ... ասէք ա(ստուա)ծ ողորմի, / թվ(ին) / Ռ-ՄՁԳ (1835):

Այս է տապան / Առաքելի որդի Եկա/նին, ով որ կարդա ...: Թերևս 1900-ական թթ.:

Այս է տապանն Մելքոնի / որդի Դադին, օ որ կարդա, / ասէ ա(ստուա)ծ, 1858:

Այս է տապան / Բէջանի որդի Ար/զիմանին, ասէք ա(ստուա)ծ ողորմի, 1860:

Այս է տապան Տ(է)ր Յակոբեան / Աւետիկի որդի Յակոբի, ով / որ հանդիպի, ասէ ա(ստուա)ծ ողորմի, / 1864:

church. Apparently, life continued in this place until the 13th to 14th centuries, which is attested by the remnants of funerary monuments, and particularly, some preserved cross-stone pedestals. The last burials were held in the cemetery between the 1830s and 1860s, being perpetuated by rectangular, mostly inscribed, tombstones the epitaphs of some of which follow below:

In this grave reposes ...Khamum's daughter Avet..., 1280 (1831).

In this grave reposes Sarukhan Alaverdi's wife Nazar. May you pray for her soul, 1831.

In this grave reposes Murazik Kirakos, who is Ohanes' son. May those who see this pray for him, 1284 (1835).

In this grave reposes Arakel's son Yekan. May those who read this... (probably, an epitaph of the 1900s).

In this grave reposes Melkon's son Dad. May those who read this pray for him, 1858.

In this grave reposes Bejan's son Arziman. May you pray for him, 1860.

In this grave reposes Ter-Hakobian Avetik's son Hakob. May those who see this pray for him, 1864.



Խաչքարերի պատվանդաններ և տապանաքար (1860 թ.) Ոսկեպարի հյուսիսարևելյան գերեզմանոցում
Khachkar pedestals and a tombstone (1860) in the north-eastern cemetery of Voskepar




Ոսկեպարի տաճարը հարավ-արևմուտքից, հյուսիս-արևմուտքից, հյուսիս-արևելքից, հյուսիսից և արևելքից
The church of Voskepar from the south-west, north-west, north-east, north and east





Հասկածներ Ոսկեպարի Սբ. Աստվածածին տաճարից
Partial views of the church of Voskepar





Ոսկեպարի տաճարի արևմտյան մուտքը և հարավային մուտքի բարավորի խաչաքանդակը
The western entrance of the church of Voskepar and the cross relief adorning the tympanum of its southern entrance

ՈՍԿԵՊԱՐԻ ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՏԱՃԱՐ

Գտնվում է գյուղից շուրջ 400 մ հյուսիս-արևելք՝ Ոսկեպար գետակի ձախ ափից ոչ հեռու՝ առնվազն վաղ միջնադարից գոյություն ունեցած բնակավայրի տարածքում՝ ծովի մակերևույթից 735 մ բարձրության վրա (N 41°04'25.27"; E 045°04'32.47"):

Ճարտարապետական բացառիկ արժանիքներով օժտված եկեղեցու մասին գրավոր առաջին վկայությունը հեղինակել է բանաստեղծ Ս. Քամայանը, որը 1884 թ. նշել է. «Հին գիղի արևելակողմը՝ ձորակի եզերքին կառուցուած է այս վանքը, տաճար խաչածև, ներքուստ և արտաքուստ սրբատաշ քարով. ունի կաթողիկէ նորաշէն...»¹⁶:

Ավելի ուշ տաճարի հորինվածքային և ճարտարապետական առանձնահատկությունների քննությամբ զբաղվել են Ս. Տեր-Ավետիսյանը¹⁷, Ա. Յակոբսոնը¹⁸, Գ. Շախկյանը¹⁹, Պ. Կունեոն²⁰, Մ. Հասրաթյանը²¹ և այլք: Բոլոր հետազոտողներն էլ կառույցն անվարան թվագրել են է դարով²²:

Պատկանում է այսպես կոչված Մաստարայի հորինվածքն ունեցող եկեղեցիների կարգին, և ինչպես մեզ հասած համանման մյուս հուշարձանները, այս մեկը ևս թվագրվում է է դարով:

Ներսում ունի քառակուսի աղոթարանի (5,4 x 5,4 մ) երկրի չորս կողմերի ուղղությամբ

SOURB ASTVATZATZIN CHURCH OF VOSKEPAR

The monument is situated not far from the left bank of the river Voskepar, in the territory of a formerly-inhabited place that goes back to at least the Early Middle Ages, around 400 metres north-east of the village, at an altitude of 735 metres above sea level (N 41°04'25.27"; E 045°04'32.47").

The first written record mentioning this church of rare architectural merits is provided by folklorist S. Kamalian, who wrote the following in 1884: "...This monastery is built on the verge of a gorge in the east of the old village. It is a cruciform monument of finely-finished stone both inwardly and outwardly and has a newly-constructed dome..."¹⁶

Later the composition and architectural peculiarities of the church were studied by S. Ter-Avetissian,¹⁷ A. Yacobson,¹⁸ G. Shakhkian,¹⁹ P. Cuneo,²⁰ M. Hasratian²¹ and others. All these researchers unanimously trace it back to the 7th century.²²

The sanctuary belongs to the so-called Mastara type of churches and goes back to the 7th century, like the other surviving monuments of the same composition.

Inwardly, Sourb Astvatzatzin has semi-circular apses opening from its square prayer-hall (5.4

16 **Քաջիկեան**, նույն տեղում: Ի դեպ, այս եկեղեցու գոյության մասին զարմանալիորեն ոչինչ չի նշել Ոսկեպարի բազմաթիվ ավելի մանր հուշարձանների մասին տեղագրական տվյալներ հաղորդած Մակար եպիս. Բարխուտարյանը:

17 **Тер-Аветисян**, Заметка о Воскепаре и Киранце, "Материалы по истории Грузии и Кавказа", выпуск VII, Тбилиси, 1937, с. 505-511.

18 **Якобсон А.**, Из истории армянского средневекового зодчества. церковь в Воскепаре, "Краткие сообщения института истории материальной культуры им. Н. Я. Марра, М.-Л., 1948, с. 29-35.

19 **Շախկյան Գ.**, Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Երևան, 1986, էջ 167-168:

20 **Cuneo P.**, Architettura Armena, tomo 1, 1988, Roma, p. 319:

21 **Հասրաթյան Մ.**, Հայկական վարդիստոնեական ճարտարապետությունը, Մոսկվա, 2010, էջ 25, 292-293:

22 Բացառություն է կազմում միայն Գ. Չուբինաշվիլին, որն իր «ճարտարապետական-գեղարվեստական քննության» մեջ (ի դեպ, որը չի էլ ներկայացրել) թվագրել է Թ-ԺԱ դարերով (**Чубинашвили Г.**, Армянское искусство с конца IX и до начала XI в., сб. "Сасунский Давид", Тбилиси, 1939, с. 31): Ինչպես երևում է, հայկական պատմական հուշարձանները «նրացնելու» գիտության հետ որևէ կապ չունեցող դրսևորումները կազմում են վրաց որոշ հեղինակների «գիտական» գործունեության առանցքը: Ի դեպ, այդօրինակ վերջին հրատարակություններից մեկը մերկայացվել է «Վարձք» հանդեսում (2013, № 8, էջ 45-64):

16 **Քաջիկեան**, ibid. Surprising as it is, Bishop Makar Barkhutarians does not say a word regarding the existence of this church although he reports topographical information concerning a great number of other monuments of less importance.

17 **Тер-Аветисян**, Заметка о Воскепаре и Киранце, "Материалы по истории Грузии и Кавказа", выпуск VII, Тбилиси, 1937, с. 505-511.




18 **Якобсон А.**, Из истории армянского средневекового зодчества. церковь в Воскепаре, "Краткие сообщения института истории материальной культуры им. Н. Я. Марра, М.-Л., 1948, с. 29-35.

19 **Շախկյան Գ.**, Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Երևան, 1986, էջ 167-168:




20 **Cuneo P.**, Architettura Armena, tomo 1, 1988, Roma, p. 319:

21 **Hasratian M.**, Early Christian Architecture of Armenia, Moscow, 2010, pp. 25, 292-293.

22 The only exception is G. Chubinashvili, who traces the church back to the 9th to 11th centuries "according to its architectural and artistic features." However, he does not even analyze them in his article to substantiate his statement (**Чубинашвили Г.**, Армянское искусство с конца IX и до начала XI в., сб. "Сасунский Давид", Тбилиси, 1939, с. 31). Apparently, certain Georgian authors focus all their "scientific" activities only on reducing the antiquity of Armenian historical monuments. With this respect, mention should be made of one of their works which has recently been reviewed and criticized in the "Vardzk" periodical (2013, № 8, pp. 45-64).



0 5



Տեսարաններ Ոսկեպարի տաճարի ներքին ծավալներից. ա) գմբեթը, բ) դեպի հարավ, գ) դեպի հյուսիս, չափագրություններ, արևմտյան և արևելյան ճակատները, մանրամասներ, հաստակազիծը և կտրվածք դեպի արևելք
The dome of the church of Voskepar; its interior to the south and north; measurements (its western and eastern facades); details; the plan of the monument and its section to the east



Հատված գլանաձև քաղով ավարտվող ավանդատան ներքին ծավալներից, քմբուկի նիստերի անկյուններում եղած տրոմպների վերնամասերում առկա օղագարդերը և մի պահ 1977 թ. վերականգնման աշխատանքներից (լու.՝ Ժ-Մ. Թիերրիի)

A partial view of the interior of the sacristy ending in a cylindrical vault; the ring-shaped ornaments adorning the upper parts of the squinches of the corners of the tambour facades and a scene from the restoration of the church in 1977 (photos by J.-M. Thierry)

ներով բացված կիսաշրջան խորաններ, որոնց կորության կենտրոնները ճակատային գծից 65 սմ ներս են ընկած:

Գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթին իրականացված է տրոմպների միջոցով:

Եկեղեցին ամբողջապես կառուցված է ավազակրային բաղադրությամբ ֆելզիտի կանոնավոր և սրբատաշ քարով:

Ինչպես սրածայր վեղարը, այնպես էլ բոլոր լանջերը պատված են եզրերում կիսագլանաձև ավարտվող ծածկասալերով:

Ունի է դարում ստեղծված հայ քաղկեդոնական տաճարներին բնորոշ ցածր բեմ (միայն մեկ աստիճան բարձրություն ունեցող նախնական բեմը նույնքան ևս անհարկի բարձրացվել է 1970-ական թթ. իրականացված վերականգնման ժամանակ):

Ավագ խորանի երկու կողմերում ունի արևելք-արևմուտք ձգվածությամբ ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն:

Միանման շքամուտքերը բացված են հարավային և արևմտյան ճակատներից: Լուսավորությունն իրականացված է երեք ճակատներից (լուսամուտ չունի միայն հյուսիսային ճակատը) և ութանիստ քմբուկից բացված չորս լուսամուտներով: Արևելյան ուղղությամբ բացված մեկական լուսամուտ ունեն նաև ավանդատները:



x 5.4 metres) in the four directions of the horizon. Their centres of curvature fall within the facade line by 65 cm.

The underdome square joins the dome by means of squinches.

The church is entirely built of regular blocks of finely-dressed felsite of lime and sand.

Its pointed spire as well as its entire roof is covered with slabs which have semi-cylindrical endings.

As is typical of the Armenian Chalcedonian churches of the 7th century, Sourb Astvatzatzin originally had a low bema which had the height of only a single step. However, during its restoration in the 1970s, it was unnecessarily raised by another one.

A vestry of a rectangular plan, extending from the east westward, is found on either side of the main apse.

The church has two similar portals which open from its southern and western facades. Light is let in through three windows opening from its facades (only the northern facade lacks one) and four others belonging to its octahedral tambour. Besides, each of the sacristies has a window opening from the east.

On the whole, Sourb Astvatzatzin has plain decoration, in which particularly noteworthy are



0 1 2 3 4 5 ս

Գոմաձորի կամ Մուքել աղի եկեղեցու մնացորդներն ու խորանն արևմուտքից, խորանի հյուսիսարևելյան անկյան տեսքը հյուսիսից և հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի)

The remnants of the church of Gomadzor or Mukel Agha; its apse from the west; the north-eastern corner of the apse from the north and its plan (measurement by A. Hakobian)

Ընդհանուր առմամբ արտաքին զուսպ հարդարանքում առանձնանում են քմբուկից և ճակատներից բացված լուսամուտների քանդակագարդ պսակները և շքամուտքերը: Արևմտյան շքամուտքի հարավային որմնասյան խարսխին առկա են ձկնապատկերներ:

Ներսում մոտեցումներն ավելի խիստ են, ընդ որում, հարդարանքի որևէ տարրից զուրկ են մույնիսկ որմնախոյակները: Այստեղ եզակիորեն առանձնանում են ութանիստ քմբուկի նիստերի անկյունները եզրափակող փոքրիկ տրոմպների վերնամասում քանդակված պարզ օղակաձև զարդերը:

ԳՈՍԱԶՈՐԻ ԵԿԵՂԵՅԻ

Գտնվում է Ոսկեպար գյուղից շուրջ 0,5 կմ հարավ-արևելք՝ անտառափեշին՝ փոքրիկ ձորակի ձախ կողմում՝ ծովի մակերևույթից 911 մ բարձրության վրա (N 41°03'22.14"; E 045°04'00.00"):

Հայտնի է նաև Մուքել աղի եկեղեցի անվամբ (մի ժամանակ այդ հողամասը վերջինիս պատկանած լինելու պատճառով):

Միանավ հորինվածքով թաղածածկ շինություն է (արտաքին չափերը՝ 8,25 x 5,10 մ): Մուտքը ենթադրաբար բացված է եղել հարավային ճակատից, իսկ լուսամուտների քանա-

the portals and the sculptured crowns of the windows of the three facades and tambour. The base of the southern pilaster of the western portal is adorned with fish reliefs.

The interior of the church is remarkable for simpler ornamentation to such an extent that even the built-in-wall capitals lack any embellishment. Special mention should be made of only the simple ring-shaped patterns carved on the upper part of the small angular squinches of the facets of the octahedral tambour.

CHURCH OF GOMADZOR


The monument is situated on the skirts of a forest, on the left side of a small gorge, about 0.5 km south-east of Voskepar, at an altitude of 822 metres above sea level (N 41°03'33.60"; E 045°00'46.20").

It is also known as church of Mukel Agha as the plot of land where it stands used to belong to this person.

The church of Gomadzor represents a un nave vaulted building (exterior dimensions: 8.25 x 5.10 metres) the entrance of which probably opened from its southern facade. As for the number of the windows and the direction whence they opened, nothing can be said regarding them. Both



Տեսարաններ Խլխլխան աղբրի եկեղեցուց և հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի)
Partial views of the church of Khelkhelean Spring and its plan (measurement by A. Hakobian)





Քառակող կոթողի բեկոր (2-Է դդ.) և խաչքար (10-11 դդ.) Խլխան աղբյուրի եկեղեցում
The fragment of a quadrilateral stele (6th to 7th centuries) and a cross-stone (9th to 11th centuries) in the church of Khelkhelan Spring



Խաչքար և խաչքարերի բեկորներ (13-Գ դ.) Խլխան աղբյուրի եկեղեցում
A cross-stone and khachkar fragments (13th century) in the church of Khelkhelan Spring

կի և ուղղվածության մասին այլևս ոչինչ ասել հնարավոր չէ: Որսերի՝ դեռևս կանգուն մնացորդների երեսապատի քարերը թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ անհետացված են, սակայն կրաշաղախ միջուկին դրոշմված հետքերը հուշում են (ավելի ակնառու է արտաքուստ), որ եկեղեցին երեսապատված է եղել կանոնավոր շարքերով իրականացված սրբատաշ քարով:

Կառուցված կարող էր լինել զարգացած միջնադարում, ի մասնավորի՝ 12-13 դարերում:

ԽԼԽԼԱՆ ԱՂԲՅՈՒ ԵԿԵՂԵՑԻ

Գտնվում է Ոսկեպար գյուղից շուրջ 1 կմ հյուսիս՝ լայնարձակ տեսարանով հարավահայաց լեռնաճյուղի ոստին՝ մի մենավոր հացենու հովանու ներքո՝ ծովի մակերևույթից 1078 մ բարձրության վրա (N 41°05'37.20"; E 045°02'41.40"):

Եկեղեցին ունի սակավադեպ հանդիպող «բաց խորան» հորինվածք (արտաքին չափերն են՝ 2,30 x 3,03 մ), որը տարածաշրջանում առկա է մաև Աճարկուտ, Բրդաձոր և Խոխմել գյուղերում պահպանված եկեղեցիներում²³:

Ավելի ոչ թե եկեղեցի, այլ պարզապես խորան ներկայացող շինությունը, ըստ կառուցողական առանձնահատկությունների, թերևս 12-13 դարերի կառույց է: Հենց շինարարու-

the inner and outer revetment stones of the standing remnants of the walls have completely disappeared, but the traces found on the mortar of the masonry, which are more noticeable outwardly, suggest that the church used to be faced with finely-finished stones laid in regular rows.

The church of Gomadzor may be traced back to the High Middle Ages, namely to the 12th to 13th centuries.

CHURCH OF KHELKHELAN SPRING

The church stands under the canopy of a lone-ly ash tree near Khelkhelan Spring, on the projecting part of a south-facing mountain branch which offers a wide view of its surroundings, about a km north of Voskepar, at an altitude of 1,078 metres above sea level (N 41°05'37.20"; E 045°02'41.40").

It has an open-apse composition (exterior dimensions: 2.30 x 3.03 metres), which is something rare, although open apses can also be found in the churches preserved in Ajarkut, Brdadzor and Khokhmel Villages.²³

The building peculiarities of this sanctuary, which resembles an apse rather than a church, probably trace it back to the period between the

²³ Ի դեպ, «բաց խորան» հորինվածքի՝ մեզ հասած կատարյալ օրինակն է Վայոց ձորի Եղեգիս ավանում գտնվող Չորաց Սբ. Ստեփանոս եկեղեցին:

²³ A perfect specimen of this open-apse composition is Zorats St. Stepanos Church in Yeghegis Township of Vayots Dzor.



ԺԳ և ԺԷ-ԺԸ դարերի խաչքարեր Խլխլան աղբյուրի եկեղեցում
Cross-stones (13th & 17th to 18th centuries) in the church of Khelkhelean Spring

քյան ընթացքում էլ խորանի որմերում ագուցվել են կոթողային և գերեզմանական հուշարձաններ (թե՛ ամբողջական և թե՛ բեկորված):

Ուշագրավ է և հատկանշական, որ առանձնապես աչքի չընկնող այս փոքրիկ հուշարձանում առկա են միմյանցից որոշակի ժամանակահատվածներով զատվող պատմամշակութային չորս փուլերին վերաբերող նյութական մշակույթի հուշարձաններ:

Առաջինը Ջ-Է դարերով թվագրվող քառակող կոթողի քանդակազարդ մի բեկոր է, որ ագուցված է խորանի արևմտյան ճակատի հյուսիսակողմում:

Երկրորդը Թ-ԺԱ դարերին բնորոշ գեղարվեստական և ոճական հատկանիշներով հարդարված խաչքարի բեկոր է:

Երրորդը ԺԲ-ԺԳ դարերին վերաբերող մի քանի գեղաքանդակ խաչքար է և խաչքարի բեկորներ, իսկ չորրորդը՝ ուշմիջնադարյան (ԺԶ-ԺԸ դդ.) խաչքարերի մնացորդներ:

Տարբեր դարաշրջաններին վերաբերող կոթողային և գերեզմանական այս հուշարձանների հավաքական ու միատեղ գոյությունը Խլխլան աղբյուրի մոտ գտնվող «բաց խորան» եկեղեցու որմերում կարծել է տալիս, որ դրանք ի սկզբանե ոչ թե գտնվելիս են եղել նշյալ վայրում, այլ այդտեղ են հավաքվել մերձակա հնավայրերից և հենց պահպանության նպատակով էլ ագուցվել «խորան»-ի որմերում:

16th and 17th centuries. It was during its construction that some steles and funerary monuments (both entirely preserved and broken ones) were set in its walls.

It is noteworthy that this small insignificant church retains monuments of material culture which are attributed to four distinct historico-cultural stages.

Chronologically speaking, the first of them is the sculptured fragment of a quadrilateral stele (6th to 7th centuries) which is set in the northern part of the western facade of the apse.

The second is a cross-stone fragment of artistic and stylistic features typical of the 9th to 11th centuries.

Next comes a group of several ornate cross-stones and khachkar fragments of the 12th to 13th centuries.

And finally, there is another group comprising remnants of late medieval (16th to 18th centuries) cross-stones.

The existence of these steles and funerary monuments of different periods in the walls of this open-apse church suggests that this is not the original place of their location: they were collected together from the adjacent ancient sites, being set in the walls of the church, probably, for their further preservation.



0 10 20 30 40 50 u

Հատված Կորաբերդից և գլխավոր հատակագիծը (լուս. և չափ.՝ Ա. Հակոբյանի)
A partial view of Koraberd and its general plan (photo & measurement by A. Hakobian)



Տեսարաններ Կորաբերդից (լուս.՝ Ա. Հակոբյանի)
Partial views of Koraberd (photos by A. Hakobian)

ԿՈՐԱԲԵՐԴ

Գտնվում է Ոսկեպար գյուղից գրեթե 3 կմ հյուսիս-արևմուտք՝ շրջապատի նկատմամբ իշխող դիրք ունեցող վիմահերձ լեռան գագաթին՝ ծովի մակերևույթից 1268 մ բարձրության վրա (N 41°05'22.50"; E 045°01'07.32"):

Տեղանքի՝ բնությունից ընձեռված անմատչելիությունը բերդաշինարարներին հնարավորություն է տվել նույնիսկ փոքրածավալ շինարարությամբ վայրը լիովին անառիկ դարձնելու: Արդյունքում անմշակ քարով և կրաշաղախով իրականացված պարսպապատերով ամրացվել են լեռան միայն հյուսիսային և արևելյան գագաթամերձ առանձին, համեմատաբար խոցելի նկատված հատվածները²⁴:

Բերդի ներքին մակերեսը բավականաչափ սահմանափակ է: Այն հյուսիս-հարավ ձգվածությամբ ունի շուրջ 40 մ երկարություն և առավել ընդարձակ մասում՝ հազիվ 18 մ լայնություն: Պարսպապատերի միջին հաստությունը 90 սմ է: Միակ դժվար ներթափանցելի մուտքը բացված է հյուսիսային կողմից:

Ըստ որմերի շարվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ բերդը ԺԲ-ԺԳ դարերի հուշարձան է:

KORABERD

Koraberd is a castle situated at the top of a steep, rocky mountain predominating over its environment, almost 3 km north-west of Voskepar, at an altitude of 1,268 metres above sea level (N 41°05'22.50"; E 045°01'07.32").


The natural impregnability of the terrain enabled the builders of the stronghold to make it quite inaccessible by unfolding only some small-scale construction activity. Thanks to this, only the vulnerable sections close to the northern and eastern summits of the mountain were fortified by means of walls of undressed stone and mortar.²⁴

The inner space of the castle is rather limited: it extends from the north southward and has a length of about 40 metres, its width hardly reaching 18 metres in its comparatively larger part. The average thickness of the fortified walls is 90 metres. The only entrance of the stronghold, which is difficult of access, opens from the north.

The masonry and building peculiarities of its walls trace it back to the 12th to 13th centuries.

24 Ի դեպ, մասնագիտական գրականության մեջ Կորաբերդի մասին ցարդ նույնիսկ հպանցիկ հիշատակություն չի տրվել:

24 It should be noted that the available specialised literature does not contain at least passing reference to Koraberd.



Տեսարանների կամրջակից և չափագրությունն ըստ Ա. Հակոբյանի
Partial views of the small bridge and its measurement (by A. Hakobian)



ԿԱՄՐՁԱԿ

Գտնվում է Ոսկեպար գյուղից 1,2 կմ արևմուտք՝ համանուն գետին աջից միախառնվող սակավաջուր մի վտակի վրա: Ծովի մակերևույթից բարձր է 808 մ (N 41°03'48.48"; E 045°02'13.20"):

Կամրջակն իրենից ներկայացնում է միմյանցից 3 մ հեռավորությամբ միանման անկանոն և նեղ զույգ թաղեր (յուրաքանչյուրի թռիչքը 2,70 մ է, իսկ անցուղու լայնությունը՝ 4,35 մ), որոնք, ամենայն հավանականությամբ, ժամանակին կապակցված են եղել գերաններով:

Կառուցված է անմշակ քարով, կրաշաղախով: Շարվածքը և ընդհանրապես կառուցողական առանձնահատկությունները, թվում է, ավելի հատկանշական են ուշ միջնադարին, սակայն, այնուամենայնիվ, բացառելի չէ, որ հուշարձանը ստեղծված լինի զարգացած միջնադարում, ի մասնավորի՝ ԺԲ-ԺԳ դարերում:

ԲԵՐԴ-ԱՇՏԱՐԱԿ

Գտնվում է Ոսկեպար գյուղից 2,5 կմ արևմուտք՝ համանուն գետի ձախ ձորապոսկին՝ ծովի մակերևույթից 802 մ բարձրության վրա (N 41°03'44.73"; E 045°01'25.86"):

Հուշարձանի գոյության մասին գրավոր, թերևս նաև եզակի հիշատակությունը հեղինակել է Մակար եպիսկոպոսը. «Աշտարակ. Աւերակ Ոսկեպարիցս վերև կայ մի քարուկիր

A SMALL BRIDGE

The monument lies over a shallow tributary, which merges into the river Voskepar from the right side, 1.2 km west of the village of the same name, at an altitude of 808 metres above sea level (N 41°03'48.48"; E 045°02'13.20").


It represents two identical narrow, slightly irregular vaults built within 3 metres of one another. Each of them has a span of 2.70 metres and a passage of a width of 4.35 metres. Most probably, they used to be joined together by means of beams.

The small bridge is built of undressed stone and mortar. Its masonry and building features seem to be more typical of the Late Middle Ages, but it might have been erected in the High Middle Ages, particularly between the 12th and 13th centuries.


A FORTIFIED TOWER

The monument is situated on the edge of a gorge lying on the left bank of the river Voskepar, 2.5 km west of Voskepar, at an altitude of 802 metres above sea level (N 41°03'44.73"; E 045°01'25.86").

Perhaps, the only written record mentioning it is provided by Bishop Makar: "Above the ruined [village of] Voskepar, there is a




0 1 2 3 4 5m
Արևաթից հարկ



0 1 2 3 4 5m
Աւաթից հարկ



0 1 2 3 4 5m
Երկուցից հարկ



0 1 2 3 4 5m
Երեքուցից հարկ

Տեսարաններ քերդ-աշտարակից և չորս հարկերի հատակագծերը (չափ.՝ Ա. Հակոբյանի)
Partial views of the fortified tower and the plans of its four floors (measurement by A. Hakobian)



Հատվածներ բերդ-աշտարակից
Partial views of the fortified tower

բարձր աշտարակ նույն վտակի ձախ կողմում, որը անուանում են Ղրգ-ղալա»²⁵:

Բերդ-աշտարակն իրենից ներկայացնում է քառակուսի հատակագծով (արտաքին չափերն են՝ 7,96 x 7,46 մ) և շուրջ 10 մ բարձրությամբ քառահարկ (մեկը՝ նկուղային, երեքը՝ վերգետնյա) ամրացված բնակելի շինություն: Ջուլգ մուտքերը բացված են առաջին հարկի հյուսիսային և հարավային ճակատներից:

Շինանյութը կրաշաղախով համակցված անմշակ քար և թրծված աղյուս է: Առկա են նաև կապույտ ջնարակապատ աղյուսներ, որպիսիք գործածվել են նաև մերձակա Բերդավանքի եկեղեցում:

Կարծում ենք, որ բերդ-աշտարակը կառուցվել է ԺԳ դարում և պատկանել հայ քաղկեդոնական դավանանքի պատկանող ոմն իշխանի:

ԲՆԱԿԵԼԻ ՀԻՆ ՏՈՒՆ

Գտնվում է Ոսկեպար գյուղից 2,5 կմ արևմուտք՝ համանուն գետի ձախ ձորապոնկին՝ բերդ-աշտարակից մոտ 30 մ հյուսիս-արևելք՝ ծովի մակերևույթից 798 մ բարձրության վրա (N 41°03'45.34"; E 045°01'26.17"):

Կառույցն իրենից ներկայացնում է երեքմանի շրջապարսպի մեջ գետեղված մոտավորապես քառակուսի հատակագծով (ներքին չափերն են՝ 3,85 x 3,52 մ) թաղակապ պարզ շի-



Ոսկեպարի բերդաշտարակամերձ միջնադարյան տան տեսքն արևելքից և հատված ներսից
The medieval house near the fortified tower of Voskepar from the east; its interior view

lofty tower built of lime and stone. It stands on the left side of the same tributary and is called Ghez-Ghala.»²⁵

The structure represents a four-floor (the first is a basement) fortified house of a square plan (exterior dimensions: 7.96 x 7.46 metres) and a height of over 10 metres. It has two entrances opening from the northern and southern facades of its first floor.

The tower is built of undressed stone, burnt brick—including some glazed blue—and mortar (similarly-glazed bricks are also used in the nearby church of Berdavank).

We think that it was erected in the 13th century and belonged to an Armenian Chalcedonian prince.

AN OLD HOUSE

This structure is situated on the edge of a gorge extending on the left bank of the river Voskepar, about 30 metres north-east of the aforementioned fortified tower, 2.5 km west of the village of the same name, at an altitude of 798 metres above sea level (N 41°03'45.34"; E 045°01'26.17").

It represents a simple vaulted dwelling of an almost square plan that used to stand within an enclosure (interior dimensions: 3.85 x 3.52



նություն, որը ներսում ունի բուխարի և մի քանի խորշ-պահարաններ:

Գրեթե ամբողջությամբ կառուցված է այն նույն աղյուսով, որը գործածվել է նաև վերոհիշյալ բերդ-աշտարակի և հատկապես Բերդավանքի եկեղեցու որմածքում: Կիրառված է նաև գետաքար՝ համակցված կրաշաղախով:

metres). Inwardly, it has a hearth and several recesses serving as closets.

The house is almost entirely built of the same brick which was used in the masonry of the nearby tower, and particularly, in the church of Berdavank. Its building material also includes pebble and mortar.

25 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 381-382:

25 Բարխուտարեանց Մ., idem, pp. 381-382.



ՈՍԿԵՊԱՐԻ ՀԻՆ ԿԱՍՈՒՐՁ



Գտնվում է Ոսկեպար գյուղից շուրջ 3,5 կմ արևմուտք՝ համանուն գետի վրա (N 41°03'33.60"; E 045°00'46.20", ծ. մ. 822 մ): Ծովի մակերևույթից բարձր է 822 մ:

Կամրջի թռիչքը 7,70 մ է, անցուղու լայնությունը՝ 3 մ, իսկ բարձրությունը՝ 6,40 մ: Կառուցված է տեղական անմշակ քարով և կրաշաղախով: Թաղն ունի փոքր-ինչ փոկած, անկանոն կամարի տեսք:

OLD BRIDGE OF VOSKEPAR

The bridge extends over the river Voskepar, about 3.5 km west of the village, at an altitude of 822 metres above sea level (N 41°03'33.60"; E 045°00'46.20").

Built of the local undressed stone and mortar, it has a span of 7.70 metres, a passage of a width of 3 metres and a height of 6.40 metres. Its vault looks like an irregular arch which is slightly extended.



0 1 2 3 4 5 10 մ

Ոսկեպարի հին կամրջի ձախափնյա խելը և չափագրություններ. հոսքընթաց ճակատը և հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, հրատ. պատրաստեց ճարտ. Ա. Հակոբյանը)

The left-bank pier of the old bridge of Voskepar; a measurement of its facade looking downstream and its plan (measurement by S. Karapetian; prepared for publication by architect A. Hakobian)



Ոսկեպարի հին կամրջի հոսքընդդիմ և հոսքընթաց ճակատները
The facades of the old bridge of Voskepar looking up-stream and downstream respectively

Նախատեսված է եղել միայն հետիոտնի և հեծյալի համար, ուստի ի սկզբանե կամրջի անցուղին եզրապատեր չի ունեցել (արդեն կամրջի սահմանափակ լայնությունն իսկ վկայում է, որ այն սայլի կամ կառքի փոխադրության համար նախատեսված չի եղել):

Հորինվածքային, կառուցողական և շարվածքային առանձնահատկությունները բնորոշ են ԺԳ դարի շինարվեստին:

ՀԻՆ ԿԱՍ ՎԵՐԻՆ ՈՍԿԵՊԱՐԻ ԳԵՐԵԶՍԱՆՈՑՆԵՐ

Չույզ գերեզմանոցներից հինը՝ միջնադարյան և ուշմիջնադարյան մի քանի խաչքարերով և տապանաքարերով, գտնվում է Ոսկեպարի հին կամրջից մոտ 150 մ հյուսիս-արևմուտք՝ ճամփեզրին՝ ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա (N 41°03'33.24"; E 045°00'43.56"):

Գերեզմանոցի հարևանությամբ դեռևս ԺԹ դարի վերջերին նստակեցության անցած և բնավորված քյուրքական ցեղերից մեկը, որն արդեն 1914 թ. կազմում էր 320 շունչ²⁶, ժամանակի ընթացքում որպես շինանյութ է գործածում գերեզմանական հուշարձանների մեծագույն մասը և գրեթե ամբողջությամբ սպառում վերգետնյա կոթողային հուշարձանները: Այս հնավայրից հափշտակված և բեկորված մի քանի խաչքարեր կարելի է տեսնել հատկապես խորհրդային տարիներին կառուցապատված, սակայն 1991 թ.-ից գյուղատեղիի վերածված Վերին Ոսկեպարի բնակելի շենքերի որմերում, իսկ բուն հնավայրում պահպանվել է ուշ միջնադարին վերաբերող կենցաղային քեմաներով պատկերաքանդակված սոսկ մի տապանաքար:

Ինչ վերաբերում է 1720-ական թթ.-ից հայթափ Հին կամ Վերին Ոսկեպարում ԺԹ դարի կեսերից նստակեցության անցած մահմեդական խաչնարած եկվորներից ավանդված գերեզմանոցին, որը գտնվում է գյուղատեղիի արևելյան եզրին՝ ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա (N 41°03'33.41"; E 045°00'43.02"), ապա այստեղ պահպանված արաբերենով և արաբատառ թուրքերենով արձանագրված ամենահին թվակիր տապանաքարերը վերաբերում են 1880-ական թթ.²⁷:

²⁶ Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 85.

²⁷ Հարկ է նշել, որ, ի տարբերություն 1988-1992 թթ. Ադրբեյջանի Հանրապետության տարածքից բռնագաղթի ենթարկված տասնյակ հազարավոր հայերի՝ հայրենի գյուղերում մնացած գերեզմանոցների, որոնք անցած տարիների ընթացքում համատարած և ծրագրված ոչնչացվել են, այստեղ՝ Վերին Ոսկեպարում, կովկասյան թաթարների («արքեջամական») գերեզմանոցն անաղարտ վիճակում է:

The bridge was originally built for only pedestrians and horsemen so that its passage was not edged with walls (its limited width shows that it was not planned to serve for transportation by carts or carriages).

Its composition, masonry and building peculiarities trace it back to the 13th century.

CEMETERIES OF OLD (UPPER) VOSKEPAR

The oldest of these two graveyards, which retains several medieval and late medieval cross-stones and tombstones, lies close to the roadside, about 150 metres north-west of the old bridge of Voskepar, at an altitude of 850 metres above sea level (N 41°03'33.24"; E 045°00'43.56").

In the late 19th century, some Turkic tribes assumed a sedentary mode of life and took up living in the neighbourhood of this cemetery (as of 1914, they already formed 320 souls).²⁶ In the course of time, the members of one of these tribes started using its monuments as building material to such an extent that almost all of them were destroyed without any trace. Several broken cross-stones which were removed from the cemetery can be seen in the walls of the houses of Upper Voskepar (reduced to a village site since 1991), where especially large-scale construction activity was carried out in the Soviet years. As for the graveyard proper, it retains only a single tombstone of the Late Middle Ages enriched with reliefs of everyday themes.

In the mid-19th century, some nomadic Muslim cattle-breeders took up a sedentary life in Old (Upper) Voskepar, which had been stripped of its Armenian population in the 1720s. Their graveyard, lying at the eastern extremity of the village site, at an altitude of 855 metres above sea level (N 41°03'33.41"; E 045°00'43.02"), retains some dated epitaphs in Arabic and Arabic Turkish, the oldest of which date from the 1880s.²⁷

²⁶ Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 85.

²⁷ Upper Voskepar's cemetery of Caucasian Tatars (Azerbaijanis) is preserved intact in flagrant contrast to the Armenian graveyards which have been subjected to premeditated destruction in the Republic of Azerbaijan since the deportation (1988 to 1992) of tens of thousands of Armenians from their native villages.



Տապանաքար Հին կամ Վերին Ոսկեպարի գերեզմանոցում, ԺԷ-ԺԸ դդ.
A tombstone (17th to 18th centuries) in the cemetery of Old (Upper) Voskepar



Հին կամ Վերին Ոսկեպարի մահմեդական գերեզմանոցը
The Islamic cemetery of Old (Upper) Voskepar



Տապանաքարեր Հին կամ Վերին Ոսկեպարի մահմեդական գերեզմանոցում, ԺԹ դար (նկարները՝ ըստ վերծանությունների հաջորդականության)

Tombstones (19th century) in the Islamic cemetery of Old (Upper) Voskepar (photos presented in the order of their epitaphs which are in the text)

Ստորև ներկայացնում ենք առավել վաղ քվարություններով մի քանի տապանագրեր՝ իրենց թարգմանություններով հանդերձ²⁸:

Գերեզմանաքար. արձանագրությունը՝ արևելահայաց դիմային երեսին, ելնդագիր, 12 տող արաբերեն և 3 տող արաբատառ թուրքերեն.

ياحنان يامن يادنيا | كل من عليها فان | ويبقى. ١٣٠٥. هذا مرقد | المرحومة | المغفورة | شهر بانو | خانيم بنت | مفتي عثمان | افندي زاد | غفر الله | زنوبهما. | نچه خاك ايله يكان اولدي لمملر | نچه پرت اولدي شرين طوصل(?) ديللر | خراوندا مقامين جنت ايله | يوزيه دايم السون رحم يللر.

Թարգմ. «Յա Հանան, Յա Մանան, Յա Դունյա»: Ասեն ինչ անցողիկ է: 1305 (1887-1888), այս է հանգիստ մուֆթի (կրոնապետ) Օսման էֆենդի-զադեի դստեր՝ ներված հանգուցյալ խանում Շահր-Բանուի, աստված ներեց մեղքերը:

Գերեզմանաքար. արձանագրությունը՝ արևելահայաց դիմային երեսին, ելնդագիր, 12 տող արաբերեն և 2 տող արաբատառ թուրքերեն.

لا اله الا الله محمد رسول الله | ربي لا تذرني فرد وانت خير الوارثين. | ١٣٠٧. | هذا مرقد | المرحوم المغفور | اسماعيل آغا | ابن ميرز بكر | آغا شريف اوف | غفر الله | زنوبهما | كوزل برعا ليشازك(?) مرقدی صاحب عطادر شراب موتيه مست(?) بقادر | كچن بو مرقد سيزدن تمنا اوقو بر فاتحة عين هدا در.

Թարգմ. Աստծուց բացի՝ աստված չկա, Մուհամմեդը աստծու մարգարեն է (հատված Դուրանից. Սուրա Ալ-Անբիյա 89): 1307 (1889-1890), այս է հանգիստ Միրզա-Բեքիր Շարիֆով աղայի որդի՝ ներված հանգուցյալ Իսմայիլ աղայի, աստված ներեց նրանց մեղքերը, աստծո ֆաթիհա:

Գերեզմանաքար. արձանագրությունը՝ արևելահայաց դիմային երեսին, ելնդագիր, 12 տող արաբերեն և 2 տող արաբատառ թուրքերեն.

لا اله الا الله محمد رسول الله | ربي لا تذرني | فردا وانت خير الوارثين. | ١٣١٧. | هذا مرقد | المرحوم | المغفور | الهيار اغا | ابن عبد الله اغا | غفر الله | زنوبهما. | أه قيل جرح فلك اولماتم الله يار اچون ... | ... جهاندن ... تاريخ الما دلی غشن تاريخ اولور اون جمله ابرار اچون.

Թարգմ. Աստծուց բացի՝ աստված չկա, Մուհամմեդը աստծու մարգարեն է (հատված Դուրանից. Սուրա Ալ-Անբիյա 89): 1317 (1899-1900): Այս է հանգիստ Արդուլլահի աղայի որդի՝ ներված հանգուցյալ Ալլահյար աղայի, աստված ներեց նրանց մեղքերը:

Գերեզմանաքար. արձանագրությունը՝ արևելահայաց դիմային երեսին, ելնդագիր, 6 տող արաբերեն.

هذا مرقد المرحوم | المغفور حسين | ابن شريف شريف | اغا من قرية اسكبار غفر الله | زنوبهم | ١٣١٨.

Թարգմ. Այս է հանգիստ Շարիֆի [Շարիֆի] աղայի որդի՝ ներված հանգուցյալ Հուսեյնի, Ասկեպար գյուղից: Աստված ներեց նրանց մեղքերը: 1318 (1900-1901):

Գերեզմանաքար. արձանագրությունը՝ արևելահայաց դիմային երեսին, ելնդագիր, 10 տող արաբերեն և 3 տող արաբատառ թուրքերեն.

لا اله الا الله محمد رسول الله | ١٣٢٥ | هذا مرقد | المرحوم المغفور | سليمان | آغا ابن | حسن آغا | شريف اوف | غفر الله | زنوبهم | اي فلك چرخيك بوزولسون كورنجه فان ايلديك بونجه ... | ... جوهرى معيو بيز قلم پهان(?) ايلاديك.

Թարգմ. Աստծուց բացի՝ աստված չկա, Մուհամմեդը աստծու մարգարեն է: 1325 (1907-1908): Այս է հանգիստ Հասան Շարիֆով աղայի որդի՝ ներված հանգուցյալ Սուլեյման աղայի: Աստված ներեց մեղքերը:

28 Վերծանությունն ու հայերեն թարգմանությունը՝ Բաֆի Գորոշյանի:

Below follow some of the earliest inscriptions with their translation into English²⁸:

12 embossed lines in Arabic and 3 lines in Arabic Turkish carved on the east-looking face of a tombstone:

ياحنان يامن يادنيا | كل من عليها فان | ويبقى. ١٣٠٥. هذا مرقد | المرحومة | المغفورة | شهر بانو | خانيم بنت | مفتي عثمان | افندي زاد | غفر الله | زنوبهما. | نچه خاك ايله يكان اولدي لمملر | نچه پرت اولدي شرين طوصل(?) ديللر | خراوندا مقامين جنت ايله | يوزيه دايم السون رحم يللر.

Transl.: “Ya Hanan Ya Manan Ya Dunia.” Everything is temporal. 1305 (1887 to 1888). In this grave reposes chief religious leader Osman Effendi-Zade’s daughter, the forgiven deceased madam Shaher-Banu. God forgave her her sins.

12 embossed lines in Arabic and 2 lines in Arabic Turkish carved on the east-looking face of a tombstone:

لا اله الا الله محمد رسول الله | ربي لا تذرني فرد وانت خير الوارثين. | ١٣٠٧. | هذا مرقد | المرحوم المغفور | اسماعيل آغا | ابن ميرز بكر | آغا شريف اوف | غفر الله | زنوبهما | كوزل برعا ليشازك(?) مرقدی صاحب عطادر شراب موتيه مست(?) بقادر | كچن بو مرقد سيزدن تمنا اوقو بر فاتحة عين هدا در.

Transl.: There is no God but God. Mohammed is the Lord’s prophet (Koran, Sura Al-Anbiya 89). 1307 (1889 to 1890). In this grave reposes Agha Mirza-Bekir Sharifov’s son, the forgiven deceased Agha Ismayil. God forgave them their sins. Fatiha of the Lord.

12 embossed lines in Arabic and 2 lines in Arabic Turkish carved on the east-looking face of a tombstone:

لا اله الا الله محمد رسول الله | ربي لا تذرني | فردا وانت خير الوارثين. | ١٣١٧. | هذا مرقد | المرحوم | المغفور | الهيار اغا | ابن عبد الله اغا | غفر الله | زنوبهما. | أه قيل جرح فلك اولماتم الله يار اچون ... | ... جهاندن ... تاريخ الما دلی غشن تاريخ اولور اون جمله ابرار اچون.

Transl.: There is no God but God. Mohammed is the Lord’s prophet (Koran, Sura Al-Anbiya 89). 1317 (1899 to 1900). In this grave reposes Agha Abdullah’s son, the forgiven late Agha Allahyar. God forgave them their sins.

6 embossed lines in Arabic on the east-looking face of a tombstone:

هذا مرقد المرحوم | المغفور حسين | ابن شريف شريف | اغا من قرية اسكبار غفر الله | زنوبهم | ١٣١٨.

Transl.: In this grave reposes Agha Sharif’s son, the forgiven deceased Husein from the village of Askepar. God forgave them their sins. 1318 (1900 to 1901).

10 embossed lines in Arabic and 3 lines in Arabic Turkish carved on the east-looking face of a tombstone:

لا اله الا الله محمد رسول الله | ١٣٢٥ | هذا مرقد | المرحوم المغفور | سليمان | آغا ابن | حسن آغا | شريف اوف | غفر الله | زنوبهم | اي فلك چرخيك بوزولسون كورنجه فان ايلديك بونجه ... | ... جوهرى معيو بيز قلم پهان(?) ايلاديك.

Transl.: There is no God but God. Mohammed is the Lord’s prophet (Koran, Sura Al-Anbiya 89). 1325 (1907 to 1908). In this grave reposes Agha Hasan Sharifov’s son, the forgiven Agha Suleyman. God forgave him his sins.

28 The decipherment of the epitaphs and their translation from Arabic into Armenian by Raffi Kortoshian.

ՍԱՐՎՈՐՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՉԱՆ

Նաև Ցամաք աղբյուր անվամբ հայտնի հուշարձանը գտնվում է Ոսկեպար գյուղից շուրջ 1 կմ հարավ-արևմուտք՝ Թևավոր խաչից փոքր-ինչ ավելի վեր՝ ծովի մակերևույթից 1026 մ բարձրության վրա (N 41°03'29.94"; E 045°02'29.04"):

Սա անասնապահությանը զբաղվող և ամառային ամիսներին դեպի սար բարձրացող աշխատավոր համագյուղացիների հիշատակին կանգնեցված թերևս միակ հուշարձանն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Հուշարձանը կանգնեցվել է 1990-ական թթ. վերջերին ոսկեպարցիների համատեղ ուժերով:

ԿԱԼԱՊԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ

Տեղացիներին ավելի Կոպպաններ անվամբ հայտնի եկեղեցու և զերեզմանոցի ավերակներով միջնադարյան գյուղատեղին գտնվում է Ոսկեպար գյուղից շուրջ 3,5 կմ հարավ-արևմուտք՝ համանուն գետի աջ վտակներից մեկը գոյացրած երկու ճյուղերի միջև արևելահայաց դիրքով երկարած լեռնաճյուղի թեքության վրա՝ անտառափեշին՝ ծովի մակերևույթից 1045 մ բարձրության վրա (N 41°02'32.70"; E 045°01'07.80"):

Գյուղատեղիում փոքրիշատե դեռևս հարատևող միակ շինությունն ավերակ եկեղեցին է, որը համանուն միանավ կառույցներից առանձնանում է ավանդատների բացակայության պայմաններում եկեղեցու հիմնական լայնության համեմատ արևելյան ճակատի կարճված առանձնահատկությամբ (արտաքին չափերն են՝ 10,37 x 5,95 մ):

Հենց այս հատվածն էլ (մասնակի՝ մաս արևմտյան որմը) եկեղեցու՝ համեմատաբար ավելի լավ պահպանված մասն է: Անկանոն կիսաբոլորակ խորանի մեջ առկա են զույգ խորհրդարաններ: Շարվածքն իրականացված է տեղական մանր և միջին չափերի անմշակ քարով, կրաշաղիխով:



Կոպպան գյուղատեղիի եկեղեցու մնացորդները հարավ-արևելքից և արևելքից
The remnants of the church of Kalapan Village Site from the south-east and east

A MONUMENT TO STOCK-BREEDING PEASANTS

This monument, which is also known as Tsamak (Dried up) Spring, stands slightly higher than the aforementioned winged cross, about a km south-west of Voskepar, at an altitude of 1,026 metres above sea level (N 41°03'29.94"; E 045°02'29.04").

It is perhaps the only monument throughout the Republic of Armenia dedicated to stock-breeding peasants who spend summer months in mountain pastures.

It was erected in the late 1990s through the united efforts of the people of Voskepar.

CHURCH OF KALAPAN


Kalapan is a medieval village site retaining the ruins of a uni-nave church and cemetery (it is also known amidst the local people by the name of Klapanner). It is situated on the skirts of a forest, on the slant of a mountain branch extending in an east-facing position between two armlets which form one of the right tributaries of the river Voskepar, about 3.5 km south-west of the village, at an altitude of 1,045 metres above sea level (N 41°02'32.70"; E 045°01'07.80").

The church of the village site differs from other similar monuments in that it lacks vestries, as a result of which, its eastern facade is shorter as compared to the main width of the church (exterior dimensions: 10.37 x 5.95 metres).

This facade as well as part of the western wall of the church is comparatively better preserved. The irregular, semi-circular apses has two recesses. The monument is built of the local small and medium-size undressed stone and mortar.



Սարվորների հուշարձանը
The monument to the stock-breeding peasants



Մալապան գյուղատեղիի եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի)
An inner view of the church of Kalapan Village Site to the east and its plan (measurement by A. Hakobian)

Ըստ հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ կարելի է թվագրել ԺԳ դարով:

ԲԵՐԴԱՎԱՆԶ

Գտնվում է Ոսկեպար գյուղից 6 կմ արևմուտք՝ համանուն գետի ձախակողմյան հարավարևելահայաց անտառածածկ լեռնալանջին՝ ծովի մակերևույթից 1054 մ բարձրության վրա (N 41°03'18.96"; E 044°59'04.74"):

Պատմական բուն անունը մոռացված և տեղացիների շրջանում սուկ Բերդավանք հասա-

Its composition and building peculiarities trace it back to the 13th century.



BERDAVANK MONASTERY

Berdavank stands on a south-east-facing wooded mountain slope, on the left bank of the river Voskepar, 6 km west of the village, at an altitude of 1,054 metres above sea level (N 41°03'18.96"; E 044°59'04.74").

The original historical name of the monastery has fallen into oblivion and the



Հատվածներ Բերդավանքի բրգաշար շրջապարսպի արևելյան հատվածից
Partial views of the eastern section of the ramparts of Berdavank



րակ անվանք հայտնի վանքը բաղկացած է արևմտյան ճակատի ողջ լայնությամբ կից սրահով կենտրոնագմբեթ հորինվածքով մեկ եկեղեցուց՝ շրջափակված եկեղեցամերձ տարածքը պարփակված ամրակուռ բազմանկյուն պարսպապատով: Վերջինիս առավել լավ պահպանված արևելյան հատվածը (երկարությունը՝ 73,5 մ) հզորացված է կիսաբլուրակ երեք աշտարակներով: Վանքն ունեցել է նաև կրկնապարիսպ, որից պահպանվել է միայն հարավարևելյան հատվածը՝ անկյունային կիսաշտարակով հանդերձ:

Արևելյան կողմում կրկնահարկ զույգ ավանդատներով կենտրոնագմբեթ եկեղեցին թե՛ հորինվածքային և թե՛ կառուցողական առանձնահատկություններով հարևանան է ուղիղ գծով միայն 4 կմ հեռավորության վրա գտնվող, ըստ ամենայնի, համաժամանակյա կառույց Կիրանցի վանքի եկեղեցուն (չափերը՝ 18,20 x 12,81 մ), սակայն գերազանցում է վերջինիս իր արտաքին չափերով (25,40 x 16,82 մ):

Ինչպես Կիրանցի վանքում, այստեղ ևս եկեղեցին կառուցված է գլխավորապես 25,5-27 x 26




local people simply call it Berdavank, which may be literally translated as ‘Monastery of the Castle.’ It consists of a central-domed church, which is adjoined by a hall all across its western facade, has two double-floor sacristies in the east and is enclosed within multangular solid ramparts. The eastern section of these fortified walls, which is comparatively better preserved (length: 73.5 metres), is consolidated by three semi-circular towers. The monastery also used to have a second row of ramparts, the only vestige of which is their south-eastern part with an angular semi-tower.

As far as exterior dimensions are concerned, the church of Berdavank (25.40 x 16.82 metres) even exceeds that of Kirants Monastery (18.20 x 12.81 metres), which is situated within 4 km of it in a straight line and was probably erected during the same period. As for their composition and build-

Հատվածներ Բերդավանքից, համալիրի և եկեղեցու հատակագծերը (չափ.՝ Ա. Հակոբյանի)
Partial views of Berdavank; the plans of the complex and church (measurement by A. Hakobian)



Բերդավանքի տեսքը հյուսիս-արևմուտքից, արևմուտքից և սրահի մնացորդները հարավից
 Berdavank from the north-west and west; the remnants of its hall from the south



Հատվածներ Բերդավանքի եկեղեցու ավերակներից
Partial views of the ruins of the church of Berdavank

Բերդավանքի եկեղեցու կրկնահարկ ավանդատունը
The double-floor vestry of the church of Berdavank



Հատվածներ Բերդավանքի եկեղեցու և սրահի քանդակազարդ քիվերից և ջնարակված աղյուս
Partial views of the sculptured cornices of the church and hall of Berdavank and a glazed brick

x 4,5-4,8 սմ չափի թրծված աղյուսով, որոնց մեջ հանդիպում են նաև ջնարակվածները (մասնավորապես կապույտ գույնի): Ինչպես եկեղեցու, այնպես էլ սրահի քիվերը քարակերտ են և այն էլ՝ պատված շքեղ զարդաքանդակներով²⁹:

Կառույցը ներքուստ սվաղված է եղել և պատված հարուստ որմնանկարներով, որոնք ներկայումս սվաղի շերտի պահպանված հատվածներում ներկայանում են միայն առանձին դրվագների տեսքով: Վերջիններս կառույցի՝ արդեն շատ վաղուց կործանված լինելու և տևաբար բաց երկնքի տակ մնալու հետևանքով ենթարկվել են բնության քայքայիչ ազդեցությանը, որի արդյունքում էլ բավա-

ing peculiarities, these two monuments are quite similar.

Like the church of Kirants Monastery, that of Berdavank is mainly built of burnt brick (25.5-27 x 26 x 4.5-4.8 cm), which also comprises some glazed particularly blue. The cornices of the church and hall are built of stone and embellished with splendid reliefs.²⁹

Inwardly, the church used to be plastered and enriched with beautiful frescoes, only some remnants of which can now be seen. Due to the destruction of the monument, these meagre mural remains are exposed to the disastrous influence of

²⁹ Ի դեպ, վանքի քիվաքարերից մեկը դեռևս խորհրդային տարիներին փոխադրվել և գործածվել է Գրիգորյանների (մախկինում՝ Թալանի) աղբյուրի (N 41°03'31.38"; E 044°59'21.66"; ծ. մ. 1035 մ) շինարարության մեջ:

²⁹ In the Soviet years, one of the cornice stones of the monastery was removed and used in the construction of the Gregorians' (formerly: Talan's) Spring (N 41°03'31.38"; E 044°59'21.66"; 1,035 metres above sea level).



կանաչափ գունաթափվել են, իսկ տեղ-տեղ՝ իսպառ չեզոքացել:

Ներկայումս եկեղեցուց պահպանվել են հյուսիսային կրկնահարկ ավանդատունը, նրան հարող խորանի հյուսիսային կորուքյան մի մասը (մինչև խորանից բացված երեք լուսամուտներից հյուսիսայինի կողապատը) և արևմտյան որմի հյուսիսային անկյանը հարող հատվածը:

Եկեղեցուն արևմուտքից կից սրահից էլ քայքայված դրոքյան մեջ դեռևս հարատևում է կառույցի հյուսիսային թևը:

Քննելով եկեղեցու հորինվածքային, ճարտարապետական, ռճական և զեղարվեստական առանձնահատկությունները, ինչպես նաև համեմատական ուսումնասիրությամբ հուշարձանը համադրելով տարածաշրջանի համանման այլ վանքերի ու եկեղեցիների հետ (ի մասնավորի՝ Կիրանց վանքի)՝ աներկբայորեն կարելի է եզրահանգել, որ Բերդավանքը, ի թիվս հյուսիսարևելյան Հայաստանի մի շարք այլ հնավայրերում պահպանված հուշարձանների, եղել է հայ քաղկեդոնականների ջանքերով ԺԳ դարում հիմնված և գործած հոգևոր նշանակալի կենտրոններից մեկը³⁰:

³⁰ Յավալի է, որ Բերդավանքը մինչև 1950-ական թթ. որպես աղյուսի հանքավայր է ծառայել մերձաբնակ ադրբեջանցիների համար, որոնք թոնիրներ կառուցելու նպատակով անվերջ քանդել են աղյուսակերտ եկեղեցին և այդ կերպ մեծապես սպառել ջրնաղագեղ եզակի կառույցը:



natural phenomena, in the aftermath of which, their colours have considerably faded away and even completely vanished in some parts.

At present the surviving remnants of the church comprise its double-floor northern sacristy, part of the northern curvature of the apses adjoining it (up to the side wall of the northern of the three windows opening from the apses) as well as the section adjoining the northern corner of the western wall.

As for the hall adjoining the church in the west, its northern wing is still preserved in a state of decomposition.

The study of the composition, architectural, stylistic and artistic peculiarities of the church of Berdavank and its comparison with other similar monuments (particularly, Kirants Monastery) found in the region lead us to the conviction that it is one of those monuments preserved in North-Eastern Armenia that were founded by Armenian Chalcedonians in the 13th century. It also functioned as a significant spiritual centre.³⁰

³⁰ Regretful as it is, for many decades (until the 1950s), the nearby Azerbaijanis used Berdavank as a “quarry” of brick: they kept destroying the church of the monastery to use its brick blocks for the construction of their hearths. In this way, they greatly ruined this magnificent edifice in the course of time.



Դրվագներ Բերդավանքի եկեղեցու որմնանկարներից
Partial views of the murals of the church of Berdavank



ՋՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ

Ոսկեպարի մերձակայքում պահպանված պատմական հուշարձաններից վերջինը, որ ներկայացվում է ստորև, գտնվում է գյուղից 8 կմ հարավ-արևմուտք՝ Ոսկեպար գետի ձախակողմյան անտառածածկ հարավարևելահայաց լեռնաճյուղին՝ ծովի մակերևույթից 1278 մ բարձրության վրա (N 41°01'54.60"; E 044°57'27.60"):

Հակառակ ժողովրդական՝ Ջուխտակ վանք անվանմանը՝ վանական համալիրն իրականում բաղկացած է փոքր հեռավորությամբ հյուսիս-հարավ ուղղությամբ միմյանց հաջորդող պաշտամունքային չորս կառույցներից, որոնցից երեքը եկեղեցիներ են, իսկ մեկը՝ մատուռ, ընդ որում, եկեղեցիներից երկուսը և մատուռը ցարդ կանգուն են, իսկ չափերով ամենամեծ եկեղեցին՝ կիսավեր:

Համալիրի բաղադրիչ չորս կառույցները ստորև ներկայացնում ենք ըստ հյուսիս-հարավ հաջորդականության:

Առաջինը միանավ երկխորան հորինվածքով և երկլանջ ծածկի ներքո առնված թաղածածկով շինություն է (արտաքին չափերը՝ 6,35 x 4,59 մ)՝ իրականացված գլխավորապես տեղական անմշակ, մասամբ էլ կոփածո քարով, կրաշաղախով: Քիվերն ու մասամբ պահպանված կիսագլանաձև ծածկասալերը կերտված են սրբատաշ քարից:

JUKHTAK MONASTERY


The last of the historical monuments preserved in the neighbourhood of Voskepar is Jukhtak Monastery situated on a wooded south-east-facing mountain branch on the left side of the river Voskepar, 8 km south-west of the village, at an altitude of 1,278 metres above sea level (N 41°01'54.60"; E 044°57'27.60").

The popular name of Jukhtak means a pair, but in fact, it consists of four religious structures (three churches and a chapel) following one another within a small distance, from the north southward. Two of the former and the latter are still preserved standing, whereas the largest church of the monastery is in a semi-ruined state.

Below follows a description of these four sanctuaries according to their location from the north southward.

The first church is a uni-nave double-apsed vaulted structure of a gable roof (exterior dimensions: 6.35 x 4.59 metres). It is mainly built of the local undressed stone (also partly of hewn stone) and mortar. The cornices and semi-cylindrical covering slabs, which are partly preserved, are finely-finished.

The church has a single entrance opening from its western facade. Light is let in through a window widening inwardly open-



Ջուխտակ վանքի հյուսիսային եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից, վանքի ընդհանուր տեսքը հարավից և գլխավոր հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի)
The northern church of Jukhtak Monastery from the north-west; a general view of the monastery from the south and its general plan (measurement by A. Hakobian)



Ջուխտակ վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից և տեսարաններ հյուսիսային (երկխորան) եկեղեցուց
A general view of Jukhtak Monastery from the south-east and partial views of its northern (double-apse) church

Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Լուսավորությունն իրականացված է գույգ խորաններից և արևմտյան ճակատից բացված դեպի ներս լայնացող մեկական լուսամուտով:

Հարդարանքով աչքի է ընկնում արևմտյան ճակատը: Այստեղ, բացի որմի մեջ հենց կառուցման ժամանակ ագուցված առնվազն երեք գեղաքանդակ խաչքարերից, մի ծաղկաթերթ վարդյակ էլ քանդակված է ճակտոմի վերնամասում: Հարկ է նշել, որ ամբողջ կառույցն անմշակ քարով կառուցված լինելու պարագայում շինության չորսբոլորը ձգվող սրբատաշ քիվագոտին ինքնին ներկայանում է որպես ճակատները հավաքող և ընդգծող հարդարանքի գեղարվեստական տարր: Լուծում, հնարք կամ պարզապես ազատ արվեստի յուրօրինակ արտահայտություն, որը տեսնում ենք Ջուխտակ վանքի մյուս կառույցներում ևս:

Ի դեպ, եթե ճարտարապետության տեսանկյունից Ջուխտակ վանքը ցարդ ուշադրության չի արժանացել, ապա հարկ է նշել, որ արդեն տասնամյակներ առաջ հնավայրի վիմագրական ժառանգությունը մեծ մասամբ ընդօրինակվել է, իսկ բոլորովին վերջերս էլ՝ հրատարակվել³¹:

ing from each of its two apses and western facade.

As far as the ornamentation of the church is concerned, particularly noteworthy is its western facade, which bears three (maybe, formerly even more) ornate cross-stones set in it right during the construction of the monument. Besides, there is also a rosette carved on the upper part of the pediment. Given the fact that the whole monument is built of undressed stone, the finely-finished cornice, which runs around it, is perceived as an artistic element of decoration emphasizing all the four facades. This component of ornamentation, which may also be regarded as a peculiar manifestation of free thought in art, is also applied in the other structures of Jukhtak Monastery.

From an architectural point of view, so far the monastic complex has not been properly studied, but most of its lapidary heritage was copied several decades ago, being published quite recently.³¹

These inscriptions are engraved on the northern cornice of the church and the angular cornice of its western pediment, which has fallen down.

³¹ Դիվան հայ վիմագրության, նշվ. հատորը, էջ 482, 484-486:

³¹ Դիվան հայ վիմագրության, idem, p. 482, 484-486:



Դրվագներ Ջուխտակ վանքի հյուսիսային (երկխորան) եկեղեցուց
Partial views of the northern (double-apsed) church of Jukhtak Monastery


Ի մասնավորի՝ վիմագրեր առկա են նաև քննվող եկեղեցու հյուսիսային քիվագրոտու և արևմտյան ճակտոնի անկյունային քիվին (վերջինս արդեն վայր է ընկել):

Եկեղեցու հյուսիսային քիվաշարին՝ 2 տող.
...մենք՝ մեղուցեալ ծառայքս Դեղս, եւ ամուսին իմ Փուրթխան տաք զմեր հոգո յիշ/...:
 Հրատ. Դիվան հայ վիմագրության, նշվ. հատորը, էջ 484:

2 lines on the northern cornice of the church:

...we, sinful servants Degh and my husband Purtkhan, gave... in memory of our souls...

The Armenian original published in: «Դիվան հայ վիմագրության», idem, p. 484.



Ծանոթ. հրատարակության մեջ վիմագրի սկզբնամասում կասկածանքով ընթերցվել է ՌԻ (1171) թվականը, որն այժմ ընդհանրապես նկատելի չէ: Նշենք նաև, որ «Դիվան»-ի հեղինակները մատնանշել են, թե իբր վիմագիրը բաղկացած է 3 տողից, բայց ներկայացրել քառատող գրչանկար, որը, ինչպես տեսնում ենք, իրականությանը չի համապատասխանում:

Note: The publishers of the inscription had some doubts while reading the year ՌԻ (1171) at its beginning, but it cannot be discerned at present. They state that the inscription consists of 3 lines, but in fact, its tracing contains four lines, which is not the case, as is evident from the inscription.

Եկեղեցու նույն ճակատին՝ նախորդից ցած, 2 տող.
Ես՝ անարժան Դրանիկս, միարա... / ...միարան...:
 Հրատ. Դիվան հայ վիմագրության, նշվ. հատորը, էջ 485:
 Ծանոթ. այս վիմագիրը մենք չենք տեսել:

2 lines beneath the aforementioned inscription on the same facade of the church:

I, worthless Dranik...

The Armenian original published in: «Դիվան հայ վիմագրության», idem, p. 485.

Note: We have not seen this inscription.

Եկեղեցու արևմտյան ճակտոնի հյուսիսային անկյան քիվաքարին՝ 3 տող.

Կարապետս եւ միարանքս էտուն / մեզ ի հոգոյն զայրստե(ա)ն / Ա (1) ար պատարագ:

Հրատ. Դիվան հայ վիմագրության, նույն տեղում:
 Ծանոթ. հրատարակության մեջ նշված է, որ վիմագիրը քառատող է եղել, իսկ սկզբնամասն էլ՝ ոչնչացած:

3 lines on the cornice stone of the northern corner of the western pediment of the church:

The brethren and I, the Prior, offered one-day divine service on Advent Day.

The Armenian original published in: «Դիվան հայ վիմագրության», ibid.

Note: The publishers state that the inscription used to comprise four lines and its initial part is not preserved.



Դիվագներ Ջուխտակ վանքի հյուսիսային (երկխորան) եկեղեցուց
 Partial views of the northern (double-apse) church of Jukhtak Monastery

Վերոնշյալ եկեղեցուց հազիվ 4-5 մ հարավ կանգուն է համալիրի երկրորդ՝ միանավ թաղածածկ բազիլիկ հորինվածք ունեցող եկեղեցին (արտաքին չափերն են՝ 6,35 x 4,86 մ):

Շինարվեստով նախորդ կառույցին հարևան այս կանգուն եկեղեցին ևս աչքի է ընկնում հենց կառուցման ժամանակ հատկապես արևմտյան ճակատին, ինչպես նաև կիսաբոլորակ խորանից բացված լուսամուտի եզրերին ազուցված մի քանի գեղաքանդակ, նաև արձանագիր խաչքարերով:

Խաչքար. ազուցված է եկեղեցու արևմտյան ճակատին, ստորին մասում՝ 3 տող.

Ես՝ Փիլիպոս, եւ Աշոտ եղբայր իմ կանգ(ն)եցաք զխաչս / բարեխասս մեզ եւ ծնողաց մեր:

Հրատ. Դիվան հայ վիմագրության, նշվ. հատորը, էջ 486:

Ծանոթ. «Դիվան»-ի հեղինակներն իրավամբ խաչքարը համարել են ԺԳ դարի գործ և միաժամանակ նշել, որ այն եկեղեցու որմնում ազուցվել է վերջինիս նորոգության ժամանակ: Այստեղ հարկ ենք համարում ավելացնել, որ ինչպես խնդրո առարկա խաչքարը, այնպես էլ բոլոր մյուսները եկեղեցու որմերում տեղադրվել են ակնհայտորեն ոչ թե նորոգության, այլ հենց կառուցման ժամանակ:

Արձանագիր բեկոր. եկեղեցու մեջ, ըստ ամենայնի, մաս է կազմել մի քանի քարերի վրա փորագրված շինարարական բովանդակությամբ ընդարձակ արձանագրության, որից տյժ միջնաքար բեկորին նկատելի են վիմագրի եռատող մնացորդները.

.../...շինեց.../...:

Հրատ. առաջին անգամ:



Զովառակ վանքի միանավ (2-րդ) եկեղեցու տեսքն արևմուտքից
The second uni-nave church of Jukhtak Monastery from the west

The second church, which is preserved standing, is situated hardly 4 to 5 metres south of the first one and thoroughly shares its building features. It represents a uni-nave vaulted basilica (exterior dimensions: 6.35 x 4.86 metres), being especially remarkable for several ornate inscribed cross-stones which were set in its western facade and along the edges of the window opening from its semi-circular apse right during its construction.

3 lines on the lower part of a cross-stone set in the western facade of the church:

My brother Ashot and I, Pilipos, erected this cross-stone for the protection of our parents' and our souls.

The Armenian original published in: «Դիվան հայ վիմագրության», idem, p. 486.

Note: The publishers justly trace this cross-stone back to the 13th century, stating that it was set in the western facade of the church during its renovation. We, however, find it expedient to point out that both this khachkar and the others were evidently placed in its walls not during its repairs, but at the time of its construction.

A fragment lying inside the church bears three lines, the remnants of a large construction inscription carved on several stones:

...built...

Published for the first time.



Եկեղեցու արևմտյան ճակատին ազուցված խաչքարեր
Cross-stones set in the western facade of the church



Միանավ (2-րդ) եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք, արևմուտք, խորանից բացված լուսամուտը և բաղը
An interior view of the second uni-nave church to the east and west; the window opening from its apse and the vault of the church

Երրորդ եկեղեցին, որը գտնվում է վերջինից հազիվ 3 մ հարավ, վանական համալիրի ամենաընդարձակ կառույցն է (արտաքին չափերն են՝ 8,57 x 5,05 մ): Սա ևս ունի միանավ հորինվածք, սակայն, ի տարբերություն նախորդների, վերջինիս թաղակապ տանիքը՝ երկանջ ծածկով հանդերձ, վաղուց արդեն ամբողջությամբ փլուզվել է: Միակ պահպանված մուտքը բացված է հյուսիսային ճակատից: Նույն կողմից եկեղեցուն կից է ուղղանկյուն հատակագծով և արևմտյան կողմից բացված մուտքով ավանդատունը (արտաքին չափերն են՝ 3,27 x 1,55 մ): Շինանյութը և կառուցողական առանձնահատկությունները նույնական են:

Վանական համալիրի վերջին կառույցը թաղակապ ուղղանկյուն հատակագծով փոքրաչափ (արտաքին չափերն են՝ 3,37 x 2,90 մ) մի մատուռ է՝ տե-

The third church, which stands hardly 3 metres south of the previous one, is the largest structure of the monastic complex (exterior dimensions: 8.57 x 5.05 metres). Like the other two, it is uni-nave, but in contrast to them, its vault and gable roof collapsed a long time ago. Its only preserved entrance opens from its northern facade. In the same direction, the church is adjoined by a vestry of a rectangular plan (exterior dimensions: 3.27 x 1.55 metres) and an entrance opening from the west. It shares the building material and construction features of the other churches.

The chapel of the monastic complex, which resembles a funerary monument, is situated about 20 metres south of the churches and has a comparatively isolated position. It





դառըված վերոնշյալ երեք եկեղեցիներից մոտ 20 մ հարավ: Ունի համեմատաբար մեկուսի դիրք:


Վերջինս ավելի դամբարանական շինություն է: Նրա արևմտյան ճակատին կանգնեցված է եղել մեծ ու գեղաբանդակ մի խաչքար (2,70 x 1,0 մ), որը խորհրդային տարիներին աղբբեջանցիների ձեռքով վայր է գցվել ու երկատվել:

Խաչքարը ստորին մասում ունի մեծ մասամբ արդեն հողմահար հնգատող արձանագրություն, որի՝ նույնիսկ թերի պահպանված բառամասերը հուշում են, որ վիմագիրը պարունակել է պատմական կարևոր տեղեկություններ:

is a small vaulted structure of a rectangular plan (exterior dimensions: 3.37 x 2.90 metres). Its western facade used to bear an ornate cross-stone of large dimensions (2.70 x 1.0 metres), but unfortunately, in the Soviet years, the Azerbaijanis threw it down and broke it in two pieces.

The lower part of this khachkar is engraved with a five-line inscription which is mostly weathered at present. The remnants of its words show that it used to contain some important historical information.

Տեսարաններ Ջուխտակ վանքի մեծ եկեղեցուց
Partial views of the large church of Jukhtak Monastery



Մատուռի արևմտյան ճակատի առջև երկատված խաչքարի վերակազմված գրչանկարը
A restored tracing of the broken cross-stone placed in front of the western facade of the chapel

Մատուռի տեսքն արևմուտքից, արևելքից, հյուսիս-արևելքից, հարավից և հատված արևելյան ճակտոնի քիվագոտուց
The chapel from the west, east, north-east and south; a partial view of the cornice of its eastern pediment

Խաչքար. հենամ մատուռի արևմտյան ճակատին.
Բարեպաշտ... /.../ զատի իշխա... / աւարգս է
միա... / ... / ...:

Հրատ. Դիվան հայ վիմագրության, նշվ. հատորը, էջ 482:
Ծանոթ. Այս և հաջորդ արձանագրությունը «Դիվան»-ի
հրատարակիչները սխալմամբ վերագրել են Տվարագեղի
հնավայրին:

Մատուռի արևմտյան ճակատին կանգնեցված երկատված խաչքարի ջարդված պատվանդանին՝ 3 տող.

Պատա(րագ) մատչի հասարակաց ն(ն)ջէ-
ց/երոց (կա)տարի, որ խափանէ, սատանափ
գ/ործ(ակից է):

Հրատ. Դիվան հայ վիմագրության, նույն տեղում:

Չուխտակ վանքում պատմության համար
մեծ արժեք ներկայացնող հուշարձաններից է
նաև 1272 թ. կերտված, տեղահան և ջարդոտ-
ված վիճակում գտնվող թևավոր խաչը (չա-
փերն են՝ 130 x 63 x 26 սմ):

Բարեբախտաբար, տասներկու տողանի
փորագիր արձանագրության հիմնական մասն
անաղարտ է և դյուրընթեռնելի.

Թվ(ին) ՉԻԱ (1272) էր, իշխանութե(ան) ա-
բապյակ U(ա)դունին, ե/ս՝ Հ(ա)սան, թոռն ա-

Engraved on the cross-stone leaning on the western
facade of the chapel:

Pious...

The Armenian original published in: Դիվան հայ վիմագրու-
թյան, idem, p. 482.

Note: The publishers erroneously attribute this inscription
as well as the following one to the ancient site of Tvaragehtsi.

3 lines on the broken pedestal of the same cross-stone:

*May divine service be held in memory of all
those dead. Those who hinder it will be satan's
accomplices.*

The Armenian original published in: Դիվան հայ
վիմագրության, ibid.


Another monument of a great historical value
which forms part of Jukhtak Monastery is a
winged cross of 1272 (dimensions: 130 x 63 x 26
cm) which is broken and removed from its origi-
nal place.

Fortunately, its 12-line inscription is mostly
preserved intact, being easy to read:


*In the year 721 (1272), under Atabek Sadun,
my spouse Khoshak, the daughter of... and I,*



Թևափոր խաչ Ջուխտակ վանքում, 1272 թ.
A winged cross in Jukhtak Monastery, 1272



Թևափոր խաչի
խնդիր է արարեալ
Այս քարով Վահագն
ԱՅՄԻՆՈՒ ՎԻՆԵ
ԱՅՄԱՐՈՒՆԵԱՆ
ԱՅՄԱՐՆԵԳԻ
ԷՄԻՍԻՆԻ ՄԻՈ
ՇԱՔԴՈՒ Ի ԱՄ
ԱՅՄԱՐՆԵՆԻ ԲԶԻՄՆԱԵ
ՑԱՔԸՆԺ ԱՅԻՔ
ՄԻՆ, ԲՄԵՆԴԵՔԱՔԱՍՏՅՅ
Ր ԱՅԻՎԵՂԱ ՎՈՒՄ Զ



կ/անջակաղնեցի, | ամուսին իմ` Խոջաք,
դուստ(ր) ...ա կանկնեցաք զխ(ա)չս և (մա)-
(տու)ցաք ընծախը..., | [մենք] և եղբարքս
ս(ա)հմ(անեցին ի) | տաւնի վ(ա)րդավ(ա)ռին Զ
(6) ...:

Հրատ. Դիվան հայ վիմագրության, նշվ. հատորը, էջ 485:
Ճանոթ. «Դիվան»-ում տարեթիվը սխալմամբ՝ ՉԻԵ
(1276): Առկա են նաև այլ անճշտություններ:

Hasan, the grandson of a person from
Akanjakaghin, erected this cross and gave gifts...
the brethren and we decided that divine service
should be held during the feast of Vardavar for 6...


The Armenian original published in: «Դիվան հայ վիմագրու-
թյան», idem, p. 485.

Note: The publishers erroneously read the year as «ՉԻԵ» (1276).
Their decipherment also contains some other mistakes.

ՊԱՆՈՒ
ԵԼՈՒ
ՈՐԾ
ԱՅՄԱՐՆԵՆԻ ԲԶԻՄՆԱԵ
ՍԻՄՈՒՆ ԲՄԵՆԴԵՔԱՔԱՍՏՅՅ
ՄԻՆ

Այսքանով ամփոփում ենք Հայաստանի
Հանրապետության Տավուշի մարզի Ոսկեպար
գյուղի տարածքում 2012-2013 թթ. ընթացքում
իրականացված ուսումնասիրությունները՝ նվիր-
ված առավելապես առաջին անգամ ներկայաց-
վող պատմական պահպանված հուշարձաննե-
րին, որոնք կարող են օգտակար լինել ինչպես
հայրենի գյուղի պատմությանը հետաքրքրված
ոսկեպարցիներին, այնպես էլ ուրրտի մասնա-
գետներին:

This book summarizes our 2012 to 2013
research into the historical monuments preserved in
the territory of Voskepar Village (Tavush Region,
Republic of Armenia) most of which have been
studied and presented for the first time. It is intend-
ed for specialists and the inhabitants of Voskepar
who are interested in the history of their native vil-
lage.





Գրքի ստեղծմանն աջակցելու համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում թանկագին ոսկեպարցիներ Կարեն Նասիբյանին, Հենզել Գրիգորյանին, Նորայր Ավետիքյանին, Վաչիկ Բադալյանին, Իշխան Աղբալյանին, Սարգիս Պապյանին և Երվանդ Եգանյանին:

We would like to extend our cordial thanks to our dear friends from Voskepar who helped us in the preparation of this book: Karen Nasibian, Henzel Grigorian, Norayr Avetikian, Vachik Badalian, Ishkhan Aghbalian, Sargis Papian and Yervand Yeganian.



Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) «SOS մշակույթ» ծրագիրը, որը կյանքի է կոչվել 2012 թ. (24 ամիս տևողությամբ) Եվրոմիության «Եվրոպական հարևանության քաղաքականության» (ԵՀՔ) շրջանակներում, նպատակ ունի համայնքային ուժերի ներգրավվածությամբ ճանաչելի դարձնելու և արժևորելու Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջաններում պահպանված պաշտամունքային և աշխարհիկ բնույթի պատմական հուշարձանները՝ կիսավեր և մոռացված բերդեր և ամրոցներ, վանքեր, եկեղեցիներ և մատուռներ, միջնադարյան բնակատեղիներ, քարանձավ-կացարաններ, գերեզմանոցներ և այլն, որոնցից շատերն անտեսված են և խնամքի, ուշադրության կարիք ունեն:

«Հատելով սահմանները՝ պահիր, պահպանիր, խնամիր» կարգախոսով «SOS մշակույթ» ծրագիրն իրականացվում է Արևելյան մշակութային գործընկերության ֆինանսավորմամբ, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի (ՀՃՈԻՀ) և dvv international կազմակերպության Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի հետ համագործակցությամբ:

«SOS մշակույթ»-ը գտնում է, որ պատմական արժեքների պահպանումն ու ուսումնասիրությունը խթանում են հեռավոր շրջաններում զբոսաշրջության զարգացումը:

«SOS մշակույթ»-ը կարևորում է մշակութային արժեքների ուսումնասիրման աշխատանքներին և դրանց պահպանման միջոցառումներին Վրաստանի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում բնակվող բազմազգ երիտասարդության ներգրավումը:

Վստահ ենք, որ հայրենաճանաչությանն առնչվող գիտելիքների խորացումը կնպաստի ապագայի առավել հոգատար քաղաքացու ձևավորմանը:

The SOS Culture project of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) was triggered in 2012 for a 24-month period within the framework of the European Neighbourhood Policy (ENP) of the European Union. It pursues the aim of raising awareness of, and evaluating the wide variety of religious and secular monuments (semi-ruined and forgotten castles and fortresses, churches, chapels and monasteries, medieval sites, cave dwellings, cemeteries, etc.) preserved in the border regions of the Republics of Armenia and Georgia with the involvement of community members (this heritage is mostly consigned to neglect and needs proper attention).

“Crossing borders to save, preserve and care”: this is the slogan of the SOS Culture project, which is funded by the Eastern Partnership Culture Programme and has been implemented in collaboration with Research on Armenian Architecture (RAA) Foundation and the dvv international Georgia Country office.

Those involved in the project are convinced that the preservation and studies of historical assets promote the development of tourism in remote regions. They attach much importance to the involvement of the youth of different nationalities living in the border regions of Armenia and Georgia in the events aimed at research into, and preservation of, cultural assets.

We believe that deep cognizance of one’s homeland and its heritage will make the coming generations more caring, fostering their sense of responsibility.

«SOS մշակույթ» ծրագիրն իրականացվել է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի և դվվ ինթերնեյշնլ վրաստանյան մասնաձյուղի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորել է Եվրոպական միությունը:
SOS Culture project is implemented by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) in cooperation with dvv international - Georgia Country Office and Research on Armenian Architecture Foundation (RAA). The project is funded by the European Union.



Այս տղագրության բովանդակությունը որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:
The views expressed in this publication do not necessarily reflect the views of the European Union.

Տղագրված է «Բյուրակն» տպարանում Printed in Byurakn Publishing-house
ԵՐԵՎԱՆ - 2013 - YEREVAN